

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ագարակավան գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լեռնարոտ, «Բ»-«Գ» հատվածով Դիան և «Գ»-«Դ» հատվածով՝ Լեռնարոտ գյուղական համայնքներին, հարավից՝ «Դ»-«Ե» հատվածով Շամիրամ և «Ե»-«Զ» հատվածով Արուճ գյուղական համայնքներին, արևմուտքից՝ «Զ»-«Է» հատվածով Կաքավաձոր և «Է»-«Ա» հատվածով՝ Օթևան գյուղական համայնքներին:

### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ԼԵՌՆԱՐՈՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Բարձունքի գագաթին գտնվող Ագարակավան, Լեռնարոտ և Օթևան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, քիչ հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1147 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով՝ հատելով ժայռեր, թիվ 3 սահմանակետով անցնում է 1585 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Ագարակավան, Լեռնարոտ և Դիան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2732 մ է:

### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ԴԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ագարակավան, Դիան և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով՝ հատելով բարձունքներ, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1153 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 540 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 4

սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 379 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 514 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, ձորի ոլորաններով անցնում 1829 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով և գագաթներով, հատելով ձորակներ, թիվ 8-9 սահմանակետերով անցնում է 1440 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարթ տեղանքով՝ թիվ 11-12 սահմանակետերով անցնում է 1566 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 330 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ձորակի թիվ 15-18 սահմանակետերով անցնելով 829 մ, և հատելով Դիան-Ագարակավան միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 229 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին, այստեղից ձորակով հոսող առվով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, հետո կրկին հարավ, առվի թիվ 21-29 սահմանակետերով անցնելով 2132 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով միջհամայնքային ճանապարհը, ձորակով՝ թիվ 31-34 սահմանակետերով անցնելով 763 մ, հասնում է թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 342 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով՝ թիվ 37-46 սահմանակետերով անցնելով 1126 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ագարակավան, Դիան և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13174 մ է:

#### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ԼԵՌՆԱՐՈՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Գ»-«Դ»**

Ագարակավան, Լեռնարոտ և Դիան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1213 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով ձորակներ և բարձունքներ, թիվ 7-9 սահմանակետերով անցնում է 1534 մ, հասնում թիվ 10

սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11 սահմանակետերով անցնում 837 մ, հասնում Ագարակավան, Լեռնարոտ և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային կետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3584 մ է:

#### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ՇԱՄԻՐԱՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Դ»-«Ե»**

Ագարակավան, Շամիրամ և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, քիչ հարավ-արևմուտք, ուղիղ գծով անցնում 662 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ագարակավան, Շամիրամ և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 662 մ է:

#### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ԱՐՈՒՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Ե»-«Զ»**

Ագարակավան, Արուճ և Կաքավաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով դաշտային և միջհամայնքային ճանապարհներ, ձորակով` թիվ 1-15 սահմանակետերով անցնում է 2353 մ, հասնում ձորակի եզրի թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, նույն ձորակի թիվ 17-20 սահմանակետերով անցնելով 854 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ագարակավան, Արուճ և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3207 մ է:

#### **ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ԿԱՔԱՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Զ»-«Է»**

Ագարակավան, Կաքավաձոր և Օթևան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ձորով թիվ 1-27 սահմանակետերով անցնելով 6806 մ, հասնում է Ագարակավան, Կաքավաձոր և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6806 մ է:

**ԱԳԱՐԱԿԱՎԱՆ - ՕՔԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Է»-«Ա»**

Ագարակավան, Օթևան և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով` թիվ 1 սահմանակետով անցնում 1161 մ, հասնում ձորակի եզրին գտնող թիվ 2 սահմանակետին, կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով` թիվ 3-5 սահմանակետերով անցնում 378 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1386 մ, հասնում է ձորի եզրին գտնող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի ոլորապտույտներով անցնում 3004 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, այստեղից ձորով շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, ձորի թիվ 11-36 սահմանակետերով անցնում է 3925 մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 562 մ, և հատելով դաշտային ճանապարհը, հասնում է Ագարակավան, Օթևան և Կաքավաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծերի ընդհանուր երկարությունը 10417 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արագած գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծաղկաշեն գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Քուչակ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շենավան գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Վարդենուտ գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Զ» հատվածով՝ Գեղաձոր գյուղական համայնքին, հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Ծաղկահովիտ գյուղական համայնքին:

### **ԱՐԱԳԱԾ – ԾԱՂԿԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Արագած, Ծաղկաշեն և Ծաղկահովիտ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը, ձորի եզրի թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 1696 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, գագաթներով, թիվ 4 սահմանակետով անցնելով 1298 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ձորակը, բարձունքների գագաթներով, թիվ 6-8 սահմանակետերով անցնում է 1833 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 543 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, լանջով և բարձունքի գագաթների թիվ 11-12 սահմանակետերով անցնելով 1577 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով, հատելով ձորակներ, անցնում է 710 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 120 մ, հասնում թիվ 15 սահմանակետին:

Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 418 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում լանջերով, հատում դաշտային ճանապարհը, թիվ 18-22 սահմանակետերով, անցնում է 2880 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, լանջով, վարելահողի եզրագծով, թիվ 24 սահմանակետով անցնում է 413 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևելք, հետո հարավ, այնուհետև հարավ-արևմուտք, լանջերով, հատելով ձորը, թիվ 26-28 սահմանակետով անցնում 825 մ, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծով, թիվ 30-32 սահմանակետերով անցնում 1063 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Արագած-Ծաղկաշեն միջհամայնքային ճանապարհը, թիվ 34 սահմանակետով անցնում է 708 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողերի եզրի դաշտային ճանապարհի թիվ 36-37 սահմանակետերով անցնում է 1015 մ, հասնում թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում Արագած-Շենավան միջհամայնքային ճանապարհը և անցնելով 58 մ, հասնում է թիվ 39 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, թիվ 40 սահմանակետով անցնում 603 մ, հասնում Արագած, Ծաղկաշեն և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15760 մ է:

### **ԱՐԱԳԱԾ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Արագած, Քուչակ և Ծաղկաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ, հատում դաշտային ճանապարհը և անցնելով 560 մ, հասնում է գետի ափին գտնվող Արագած, Քուչակ և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետի:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 560 մ է:

## ԱՐԱԳԱԾ – ՇԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Արագած, Շենավան և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետակով, թիվ 1-4 սահմանակետերով անցնելով 887 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 231 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, հատելով Արագած-Շենավան միջհամայնքային ճանապարհը թիվ 7 սահմանակետով անցնում է 182 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 9 սահմանակետով անցնում 741 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 135 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով գետակը և Վարդենուտ-Արագած միջհամայնքային ճանապարհը, բնակավայրի հարավով անցնող ճանապարհի հյուսիսային եզրով անցնում է 3442 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 13 սահմանակետով անցնում 830 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորով անցնում 1665 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 56 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջերով, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1638 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորակով հոսող Գեղարոտ գետակով, այնուհետև լանջերով անցնում 5688 մ, հասնում է Արագած, Շենավան և Վարդենուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15496 մ է:

## **ԱՐԱԳԱԾ – ՎԱՐԴԵՆՈՒՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ձորի եզրին գտնվող Արագած, Վարդենուտ և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով անցնում 5245 մ, հասնում Արագած, Վարդենուտ և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետի:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5245 մ է:

## **ԱՐԱԳԱԾ – ԳԵՂԱՁՈՐ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Արագած, Գեղաձոր և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-12 սահմանակետերով անցնելով 1172 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Արագած, Գեղաձոր և Վարդենուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1172 մ է:

## **ԱՐԱԳԱԾ – ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Արագած, Ծաղկաշեն և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լանջով, թիվ 1 սահմանակետով անցնում 842 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 3-27 սահմանակետերով անցնելով 2962 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Արագած, Ծաղկահովիտ և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3804 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արագածավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գետափ, «Բ»-«Գ» հատվածով՝ Հակկո և «Գ»-«Դ» հատվածով՝ Կանչ գյուղական համայնքներին, հյուսիս-արևելքից և արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Թաթուլ գյուղական համայնքին, արևելքից «Ե»-«Զ» հատվածով՝ Արտենի գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Զ»-«Է» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ պետական սահմանին (Թուրքիայի Հանրապետություն):

### **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ - ԳԵՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Արագածավան, Գետափ գյուղական համայնքների և պետական սահմանի (Թուրքիայի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, հարթ տեղանքով՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 2673 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, հատելով երկաթգիծը և դաշտային ճանապարհը, թիվ 5-8 սահմանակետերով անցնում է 2598 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 1375 մ, հասնում Արագածավան, Գետափ և Հակկո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6645 մ է:

### **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ՀԱԿԿՈ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արագածավան, Հակկո և Գետափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բլրային տեղանքով, թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 1734 մ, հասնում է 1423

մ նիշ ունեցող գազաթի թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, հատելով ջրբաժաններ և ձոր, թիվ 5-6 սահմանակետերով անցնում է 2335 մ, հասնում Արագածավան, Հակկո և Կանչ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4069 մ է:

#### **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ԿԱՆՉ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Գ»-«Դ»**

Արագածավան, Կանչ և Հակկո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը, բարձունքով, անցնում է 824 մ, հասնում 1426 մ նիշ ունեցող գազաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով` թիվ 2-5 սահմանակետերով անցնելով 4357 մ, հասնում է բարձունքի գազաթին գտնվող Արագածավան, Կանչ և Թաթուլ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5181 մ է:

#### **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ԹԱԹՈՒԼ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Դ»-«Ե»**

Արագածավան, Թաթուլ և Կանչ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 856 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 2197 մ, հասնում թիվ 2 սահմանակետին ապա շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հետո հարավ, հատելով ժայռը, բարձունքի գազաթի թիվ 3 սահմանակետով անցնում է 2170 մ, հասնում բարձունքի գազաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 143 մ, հասնում բարձունքի գազաթի թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի թիվ 6-9 սահմանակետերով անցնելով 1092 մ, հասնում է բարձունքի գազաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 153 մ, հասնում է հաջորդ գազաթի թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 299 մ, հասնում Արագածավան, Թաթուլ և Արտենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6910 մ է:

## **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ԱՐՏԵՆԻ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Արագածավան, Արտենի և Թաթուլ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, Թալինի երկրորդ հերթի ջրանցքով, թիվ 1-24 սահմանակետերով անցնում 5823 մ, հասնում է Սելավ-Մաստարայի և ձախ ճյուղի հատման խաչմերուկում գտնվող թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, սելավատարի թիվ 26-44 սահմանակետերով անցնում է 3292 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 46 սահմանակետով անցնում է 385 մ, հասնում թիվ 47 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով երկաթգիծը և դաշտային ճանապարհներ, թիվ 48-52 սահմանակետերով անցնում է 3057 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքի թիվ 54-59 սահմանակետերով անցնելով 1451 մ, հասնում է ջրանցքի եզրին գտնվող Արագածավան, Արտենի գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14007 մ է:

## **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

«Զ»-«Է» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

## **ԱՐԱԳԱԾԱՎԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԱՆ (ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»**

«Է»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Անտառուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից, արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Բյուրական գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Ա» հատվածով՝ Օրգով գյուղական համայնքին:

### **ԱՆՏԱՌՈՒՏ – ԲՅՈՒՂԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Անտառուտ, Բյուրական և Օրգով գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորի թեք լանջով թեքվում է դեպի արևելք, անցնում 137 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղ միանում է գրունտային ճանապարհին և այդ ճանապարհի ոլորապտույտներով թեքվելով դեպի հարավ, ապա հյուսիս, հյուսիս-արևելք, արևելք, հյուսիս, հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, հարավ-արևելք և հարավ, միանում է ձորին, ձորով շարունակվում դեպի հարավ և անցնելով 9009 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի գազաթների թիվ 3-13 սահմանակետերով անցնելով 2121 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջերով թիվ 15-18 սահմանակետերով անցնում 816 մ, հասնում միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, այստեղից կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Բյուրական-Անտառուտ միջհամայնքային ճանապարհի թիվ 20-26 սահմանակետերով անցնելով 1109 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող Անտառուտ, Բյուրական և Օրգով գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13192 մ է:

## ԱՆՏԱՌՈՒՏ – ՕՐԳՈՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Ա»

Ջորի եզրին գտնվող Անտառուտ, Օրգով և Բյուրական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևելք, ձորով անցնում 2271 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 848 մ, հասնում Ամբերդ գետի և Արխաշան գետակի հատման կետում գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, Ամբերդ գետով՝ հոսանքի ուղղությամբ, թիվ 3 սահմանակետով անցնում է 3592 մ, հասնում Անտառուտ, Օրգով և Բյուրական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6711 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՆԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աշնակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից՝ «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կաթնաղբյուր և «Բ»-«Գ» հատվածով՝ Դավթաշեն գյուղական համայնքներին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Վերին Սասնաշեն գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Լուսակն և «Զ»-«Ա» հատվածով՝ Դաշտադեն գյուղական համայնքներին:

### **ԱՇՆԱԿ – ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Աշնակ, Կաթնաղբյուր և Դաշտադեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 769 մ, հասնում միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 759 մ, հասնում Աշնակ, Կաթնաղբյուր և Դավթաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1528 մ է:

### **ԱՇՆԱԿ – ԴԱՎԹԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Աշնակ, Դավթաշեն և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակներ, ջրբաժան, Աշնակ-Դավթաշեն միջհամայնքային ճանապարհը սարահարթային տեղանքով, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 3037 մ, հասնում է Աշնակ, Դավթաշեն և Վերին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3037 մ է:

## **ԱՇՆԱԿ – ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Աշնակ, Վերին Սասնաշեն և Դավթաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով անցնում 828 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1090 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, անցնում 472 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ, անցնում 721 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով՝ թիվ 5-15 սահմանակետերով անցնելով 10002 մ, հասնում է Աշնակ, Վերին Սասնաշեն գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13113 մ է:

## **ԱՇՆԱԿ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

## **ԱՇՆԱԿ – ԼՈՒՍԱԿՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Աշնակ, Լուսակն և Դաշտադեմ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Թալին-Արաքս ավտոճանապարհից դեպի Աշնակ թեքվող ճանապարհների խաչմերուկում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1078 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 465 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 785 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում ձորակը, և թիվ 6 սահմանակետով անցնելով 1517 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այստեղից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 1631 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով, թիվ 13-16 սահմանակետերով անցնելով 605 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 17

սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 6061 մ, հասնում է Աշնակ, Լուսակն գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12142 մ է:

### **ԱՇՆԱԿ – ԴԱՇՏԱԴԵՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Աշնակ, Դաշտադեմ և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-22 սահմանակետերով անցնելով 3861 մ հասնում է թիվ 23 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, նույն ձորով՝ թիվ 24-32 սահմանակետերով անցնելով 1693 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում 542 մ, հասնում Թալին-Արաքս ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք և հարավ, ձորակով՝ թիվ 36-46 սահմանակետերով անցնելով 1361 մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 41 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, այստեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 220 մ, հասնում Թալին-Արաքս ավտոճանապարհից դեպի Աշնակ թեքվող ճանապարհների խաչմերուկում գտնվող Աշնակ, Դաշտադեմ և Լուսակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին :

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7718 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ավան գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տեղեր գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Աղծք, «Գ»-«Դ» հատվածով՝ Ուջան և «Դ»-«Ե» հատվածով՝ Կոչ գյուղական համայնքներին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Վերին Սասունիկ գյուղական համայնքին:

### **ԱՎԱՆ – ՏԵՂԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ավան, Վերին Սասունիկ և Տեղեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում է 979 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 524 մ, հասնում ժայռի կատարին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 632 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ, սարալանջերով, ապա ձորով՝ թիվ 5 սահմանակետով անցնում է 6167 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 226 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 2441 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 56 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 185 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևելք, ձորակով անցնում 5458 մ, հասնում Ավան, Տեղեր և Աղծք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16667 մ է:

### **ԱՎԱՆ – ԱՂԾՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ավան, Աղծք և Տեղեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 201 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ջրբաժաններ և ձորակը, թիվ 2 սահմանակետով անցնում է 714 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 395 մ, հասնում Ավան, Աղծք և Ռիջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1310 մ է:

### **ԱՎԱՆ – ՌԻՋԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ավան, Ռիջան և Աղծք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, քիչ հյուսիս-արևելք, անցնում 243 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 565 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, քիչ հյուսիս-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում է 215 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրանցքի թիվ 5-22 սահմանակետերով անցնում 1649 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, հատելով ջրբաժանը, թիվ 24-26 սահմանակետերով անցնում է 247 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով, ապա ձորով, թիվ 28-48 սահմանակետերով անցնելով 3025 մ, հասնում է Ավան, Ռիջան և Կոշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5943 մ է:

### **ԱՎԱՆ – ԿՈՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ավան, Կոշ և Վերին Սասունիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, հատելով ձորակը, հասնում է Կոշ – Վերին Սասունիկ միջհամայնքային ճանապարհին, նշված ճանապարհով շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ձորակը,

ջրբաժանը, լանջով հասնում է ձորին, ձորով թեքվում դեպի հյուսիս, հասնում երկու ձորերի հատման խաչմերուկ, ապա թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք լանջերով հասնում թիվ 1 սահմանակետին, անցնելով 2419 մ: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրային սահմանով անցնում 169 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, հատելով ձորակը, թիվ 3-4 սահմանակետերով անցնում է 641 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 6 սահմանակետով անցնում 389 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը և բարձունքներ, թիվ 8 սահմանակետով անցնում է 576 մ, հասնում ձորի եզրի թիվ 9 սահմանակետին, ապա հատում է ձորը, թեքվում դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, լանջով` թիվ 10 սահմանակետով անցնելով 639 մ, հասնում է Ավան, Կոշ և Ուջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային կետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4833 մ է:

#### **ԱՎԱՆ – ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ա»**

Ավան, Վերին Սասունիկ և Տեղեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 582 մ, հասնում թիվ 1 սահմանակետին որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով` թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 1243 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորով անցնում 2662 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք, լեռնագագաթներով` թիվ 6-8 սահմանակետերով անցնում 1382 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 2861 մ, հասնում սարի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 1356 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 14-17 սահմանակետերով անցնելով 2314 մ, հասնում է ձորի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Վերին Սասունիկ-Կոշ

միջհամայնքային ճանապարհը, անցնում 1633 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 1100 մ, հասնում Ավան, Վերին Սասունիկ և Կոշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15133 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արայի գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վարդենուտ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ափնագյուղ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Արտաշավան գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Ուշի գյուղական համայնքին:

### **ԱՐԱՅԻ – ՎԱՐԴԵՆՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Արայի, Վարդենուտ և Ուշի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 367 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնելով 356 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով և բարձունքների գագաթներով անցնելով 3990 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ջրբաժաններ և դաշտային ճանապարհներ, ձորակով՝ թիվ 4-7 սահմանակետերով անցնում է 3111 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 461 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, այստեղից ձորով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ և բարձունքներ անցնում է 6611 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 11-12 սահմանակետերով, անցնում 1809 մ, հասնում դաշտամիջյան ճանապարհի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 380 մ, հասնում է ճանապարհի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 14 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակով անցնում 467 մ, հասնում թիվ

15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 249 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1360 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ծորակով անցնում 664 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 138 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 444 մ, հասնում է Արայի-Վարդենուտ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, դաշտային ճանապարհով, այնուհետև դարձյալ առվով անցնելով 1891 մ, հասնում է Արայի, Վարդենուտ և Ափնագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22297 մ է:

#### **ԱՐԱՅԻ – ԱՓՆԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արայի, Ափնագյուղ և Վարդենուտ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևելք, առվով անցնում 933 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 358 մ, հասնում Երևան-Վանաձոր պետական նշանակության ճանապարհից դեպի Արայի տանող ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 475 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 165 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 462 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 184 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 197 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 254 մ, հասնում գետակի ափին գտնվող

Արայի, Ափնագյուղ և Արտաշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3028 մ է:

### **ԱՐԱՅԻ – ԱՐՏԱՇԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԻՆ՝ «Գ»-«Դ»**

Արայի, Արտաշավան, և Ուշի, գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, լանջերով անցնում 845 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով՝ թիվ 2-4 սահմանակետերով անցնում 3621 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում 647 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհները և ձորակները, ջրբաժանով անցնում է 5846 մ, հասնում ձորակի եզրի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակի թիվ 8-9 սահմանակետերով անցնելով 438 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, հատելով դաշտային ճանապարհներ, ուղիղ գծով, թիվ 11 սահմանակետով, անցնում է 903 մ, հասնում բարձունքի վրա թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով թիվ 13-16 սահմանակետերով անցնում է 1742 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնելով 965 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով ձորը անցնում է 645 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 276 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով հոսող առվով՝ թիվ 22-25 սահմանակետերով անցնելով 1671 մ, հասնում է առվի եզրի թիվ 26 սահմանակետին, այստեղից առվի ոլորաններով անցնելով 939 մ, հասնում է Արայի, Արտաշավան և Ափնագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18539 մ է:

## ԱՐԱՅԻ – ՈՒՇԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Արայի, Ուշի և Վարդենուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ, ապա հարավ-արևելք, ձորով անցնում 2351 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ուղիղ գծով՝ թիվ 2 սահմանակետով անցնելով 884 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով թիվ 4-5 սահմանակետերով անցնում 2077 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետից, որտեղից ձորով շարունակվում է դեպի հարավ-արևելք, անցնում 340 մ, հասնում ձորի եզրին գտնվող Արայի, Ուշի և Արտաշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5653 մ է:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտաշավան գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արայի գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով Ափնագյուղ և «Գ»-«Դ» հատվածով՝ Սաղմոսավան գյուղական համայնքներին, հարավից և հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Օհանավան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Ուշի գյուղական համայնքին:

### ԱՐՏԱՇԱՎԱՆ – ԱՐԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Արտաշավան, Արայի և Ուշի, գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, լանջերով անցնում 845 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով՝ թիվ 2-4 սահմանակետերով անցնում 3621 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում 647 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհները և ձորակները, ջրբաժանով անցնում է 5846 մ, հասնում ձորակի եզրի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակի թիվ 8-9 սահմանակետերով անցնելով 438 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, հատելով դաշտային ճանապարհներ, ուղիղ գծով՝ թիվ 11 սահմանակետով, անցնում է 903 մ, հասնում բարձունքի վրա թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով թիվ 13-16 սահմանակետերով անցնում է 1742 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնելով 965 մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով ձորը անցնում է 645 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 276 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով հոսող առվով՝ թիվ 22-25 սահմանակետերով անցնելով 1671 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին, այստեղից առվի ոլորաններով անցնելով 939 մ, հասնում է Արտաշավան, Արայի և Ափնագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18539 մ է:

### **ԱՐՏԱՇԱՎԱՆ – ԱՓՆԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արտաշավան, Ափնագյուղ և Արայի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով անցնում 1131 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 254 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հարթավայրային ռելիեֆով՝ թիվ 2-4 սահմանակետերով անցնելով 934 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հարթ տեղանքով անցնում 194 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով՝ անցնում 473 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև հյուսիս, լանջով՝ թիվ 8 սահմանակետով անցնելով 467 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատելով ձորակներ, հարթավայրային ռելիեֆով՝ թիվ 10-14 սահմանակետերով անցնում է 3600 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 1513 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ-արևելք, լանջերով՝ թիվ 17 սահմանակետով անցնում 1034 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, լանջերով անցնում է 4484 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 20 սահմանակետերով անցնում 350 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, հետո

արևելք, թիվ 22 սահմանակետով անցնում 953 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, գագաթով անցնում 562 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 24 սահմանակետին, հատում է ճանապարհը ապա թեքվում դեպի արևմուտք, հետո հյուսիս-արևմուտք, թիվ 25 սահմանակետով անցնելով 221 մ, հանում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 390 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 28-32 սահմանակետերով՝ լանջով անցնում է 1171 մ, հասնում ձորի եզրին գտնվող Արտաշավան, Ափնագյուղ և Սաղմոսավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17728 մ է:

#### **ԱՐՏԱՇԱՎԱՆ - ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Արտաշավան, Ափնագյուղ և Սաղմոսավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1450 մ, հասնում ձորի եզրի թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 555 մ, հասնում ձորի եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, և հարավ-արևմուտք ձորի ոլորանների թիվ 7-11 սահմանակետերով անցնելով 3308 մ, հասնում Արտաշավան, Սաղմոսավան և Օհանավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5313 մ է:

#### **ԱՐՏԱՇԱՎԱՆ – ՕՀԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Արտաշավան, Օհանավան և Ուշի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, հասնում դաշտային ճանապարհին, հատում Արտաշավան-Օհանավան միջհամայնքային ճանապարհը և թիվ 1-4 սահմանակետերով անցնելով 1498 մ, հասնում

թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 656 մ, հասնում ճանապարհի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս, ջրանցքով անցնում 285 մ, հասնում Արտաշավան, Օհանավան և Սաղմոսավան գյուղական համայնքների և տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2439 մ է:

### **ԱՐՏԱՇԱՎԱՆ – ՌԻՇԻ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Արտաշավան, Ուշի և Արայի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 10283 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, ապա բլրագագաթներով՝ հատելով ձորակներ և դաշտային ճանապարհներ, թիվ 2-12 սահմանակետերով անցնում է 1621 մ, հասնում առվի ափին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհները, առվով անցնում է 5492 մ, հասնում Արտաշավան, Ռիշի և Օհանավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17396 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արտենի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը՝ հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Թաթուլ գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Դոմասար և «Գ»-«Դ» հատվածով՝ Լուսակն գյուղական համայնքներին, հարավից՝ «Դ»-«Ե» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից և հյուսիսից՝ «Ե»-«Ա» հատվածով՝ Արագածավան գյուղական համայնքին:

### **ԱՐՏԵՆԻ – ԹԱԹՈՒԼ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Արտենի, Թաթուլ, և Արագածավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքով՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնում 695 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 559 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում ճանապարհը և ձորակը, թիվ 7 սահմանակետով անցնելով 1475 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը և թիվ 9 սահմանակետով անցնելով 1196 մ, հասնում է Արտենի, Թաթուլ և Դոմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3925 մ է:

### **ԱՐՏԵՆԻ – ԴՊԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արտենի, Դոմասար և Թաթուլ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում ձորակը և դաշտային ճանապարհը, թիվ 1 սահմանակետով անցնում 721 մ,

հասնում Արտենի, Դոմասար և Լուսակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 721 մ է:

#### **ԱՐՏԵՆԻ – ԼՈՒՍԱԿՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Արտենի, Լուսակն և Դոմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 780 մ, հասնում 1258 մ նիշ ունեցող բարձունքի գագաթի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 643 մ, հաջորդ բարձունքի գագաթի թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ձորակը, ջրբաժանի թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 1518 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 915 մ, հասնում 1233 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 753 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ձորակի ոլորապտույտներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակով, այնուհետև Մաստարա գետով, թիվ 12-37 սահմանակետերով անցնելով 4032 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող Արտենի, Լուսակն գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8641 մ է:

#### **ԱՐՏԵՆԻ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

#### **ԱՐՏԵՆԻ - ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»**

Արտենի, Արագածավան և Թաթուլ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, Թալինի երկրորդ հերթի ջրանցքով, թիվ 1-24 սահմանակետերով

անցնում 5823 մ, հասնում է Սելավ-Մաստարայի և ձախ ճյուղի հատման խաչներուկում գտնվող թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, սելավատարի թիվ 26-44 սահմանակետերով անցնում է 3292 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 46 սահմանակետով անցնում է 385 մ, հասնում թիվ 47 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով երկաթգիծը և դաշտային ճանապարհներ, թիվ 48-52 սահմանակետերով անցնում է 3057 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքի թիվ 54-59 սահմանակետերով անցնելով 1451 մ, հասնում է ջրանցքի եզրին գտնվող Արտենի, Արագածավան գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14007 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՒԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արուճ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կաքավաձոր գյուղական համայնքին, հյուսիսից և հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով Ագարակավան գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Շամիրամ, «Դ»-«Ե» հատվածով՝ Դպրևանք և «Ե»-«Զ» հատվածով՝ Շամիրամ գյուղական համայնքներին, հարավ-արևելքից, հարավից և հարավ-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Նոր Ամանոս գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով Պարտիզակ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ը»-«Ա» հատվածով Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքին:

### **ԱՐՈՒԿ – ԿԱՔԱՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Համայնքը հյուսիսից՝ «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սուսեր, «Բ»-«Գ» հատվածով՝ Ցամաքասար, «Գ»-«Դ» հատվածով՝ Հացաշեն և «Դ»-«Ե» հատվածով՝ Մաստարա գյուղական համայնքներին, արևմուտքից՝ «Ե»-«Զ» հատվածով Թալին քաղաքային և «Զ»-«Է» հատվածով Արևուտ գյուղական համայնքներին, հարավ-արևելքից՝ «Է»-«Ը» հատվածով՝ Դղմասար գյուղական համայնքին, հարավից՝ «Ը»-«Թ» հատվածով Արտենի գյուղական համայնքին, արևմուտքից՝ «Թ»-«Ժ» հատվածով՝ Արագածավան, «Ժ»-«Ի» հատվածով՝ Կանչ և «Ի»-«Լ» հատվածով՝ Հակկո գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից՝ «Լ»-«Ա» հատվածով՝ Սորիկ գյուղական համայնքին:

### **ԹԱԹՈՒԼ – ՍՈՒՍԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Թաթուլ, Սուսեր և Սորիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ձորով՝ թիվ 1-9 սահմանակետերով անցնում 920 մ, հասնում Թաթուլ, Սուսեր և Ցամաքասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 920 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ՑԱՄԱՔԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Թաթուլ, Ցամաքասար և Սուսեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով դաշտային ճանապարհը և բլուրը, անցնում է 376 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորի ոլորանների թիվ 2-12 սահմանակետերով անցնելով 1822 մ, հասնում է ձորի եզրին

գտնվող Թաթուլ, Յամաքասար և Հացաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2198 մ է:

#### **ԹԱԹՈՒԼ – ՀԱՑԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Թաթուլ, Հացաշեն և Յամաքասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 920 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, հատելով միջհամայնքային ճանապարհը և լանջի թիվ 2-4 սահմանակետերով անցնելով 1187 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ձորակի ոլորանների թիվ 6-17 սահմանակետերով անցնելով 1556 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող Թաթուլ, Հացաշեն և Մաստարա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3663 մ է:

#### **ԹԱԹՈՒԼ – ՄԱՍՏԱՐԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Թաթուլ, Մաստարա և Հացաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 737 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից շարունակում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով՝ թիվ 7 սահմանակետով անցնելով 1722 մ, հասնում է Թաթուլ, Մաստարա գյուղական և Թալին քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2459 մ է:

#### **ԹԱԹՈՒԼ – ԹԱԼԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Թաթուլ, Մաստարա գյուղական և Թալին քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 914 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով թիվ 2 սահմանակետով անցնելով 1321 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին:

Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը անցնում է 647 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, հատելով ձորակը և բարձունքը, անցնում է 423 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում միջհամայնքային ճանապարհը և դաշտային ճանապարհը, բարձունքներով՝ թիվ 6-9 սահմանակետերով անցնում է 1845 մ, հասնում Թաթուլ, Արևուտ գյուղական և Թալին քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ջ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5149 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ԱՐԵՎՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ջ»-«Ե»**

Թաթուլ, Արևուտ գյուղական և Թալին քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-3 սահմանակետերով անցնում է 1127 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակի թիվ 5-8 սահմանակետերով անցնելով 1140 մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով բարձունքը և ձորը, անցնում է 1084 մ, հասնում 2047 մ միջ ունեցող «Բագատլու» կոչվող եռանկյունաչափական թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակներ և ջրբաժաններ, լանջով՝ թիվ 11-13 սահմանակետերով անցնում 4777 մ, հասնում է 1401 մ միջ ունեցող «Ջագիգլուխ» կոչվող եռանկյունաչափական թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով ձորակներ, ջրբաժան և դաշտային ճանապարհ, թիվ 15 սահմանակետով անցնում է 1972 մ, հասնում Թաթուլ, Արևուտ և Դոմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ջ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10100 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ԴՊՄԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ը»**

Թաթուլ, Դոմասար և Արևուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք,

անցնում 169 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ձորով անցնում 66 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը և դաշտային ճանապարհը, լանջով անցնում է 870 մ, հասնում Թաթուլ, Դոմասար և Արտենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1105 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ԱՐՏԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Ը»-«Թ»**

Թաթուլ, Արտենի և Արագածավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքով` թիվ 1-3 սահմանակետերով անցնում 695 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 559 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում ճանապարհը և ձորակը, թիվ 7 սահմանակետով անցնելով 1475 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը և թիվ 9 սահմանակետով անցնելով 1196 մ, հասնում է Թաթուլ, Արտենի և Դոմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3925 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Թ»-«Ժ»**

Թաթուլ, Արագածավան և Կանչ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 856 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 2197 մ, հասնում թիվ 2 սահմանակետին ապա շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, հետո հարավ, հատելով ժայռը, բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետով անցնում է 2170 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 143 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի թիվ 6-9 սահմանակետերով անցնելով 1092 մ, հասնում

է բարձունքի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 153 մ, հասնում է հաջորդ գագաթի թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, քիչ հարավ-արևմուտք, անցնում 299 մ, հասնում Թաթուլ, Արագածավան և Արտեմի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6910 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ԿԱՆՉ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ժ»-«Ի»**

Թաթուլ, Կանչ և Հակկո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, արևելք, ապա կրկին հյուսիս-արևելք, թույլ արտահայտված բլուրներով, այնուհետև դաշտային ճանապարհով, թիվ 1-8 սահմանակետերով անցնում է 1303 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 554 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թույլ արտահայտված բլրաթմբային տեղանքով՝ թիվ 11 սահմանակետով անցնելով 1911 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով ձորակը, ջրբաժանով՝ թիվ 13-14 սահմանակետերով անցնելով 802 մ, հասնում է Թաթուլ, Կանչ և Արագածավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ի» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4569 մ է:

### **ԹԱԹՈՒԼ – ՀԱԿԿՈ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ի»-«Լ»**

Թաթուլ, Հակկո և Սորիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով միջհամայնքային ճանապարհը և թիվ 1 սահմանակետով անցնելով 1003 մ, հասնում է Թաթուլ, Հակկո և Կանչ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետին:

«Ի»-«Լ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1003 մ է:

## **ԹԱԹՈՒԼ – ՍՈՐԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ` «Լ»-«Ա»**

Ձորակի եզրին գտնվող Թաթուլ, Սորիկ և Սուսեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա արևելք, հետո հարավ, ձորակի թիվ 1-5 սահմանակետերով անցնում է 813 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, թմբերով՝ թիվ 7 սահմանակետով անցնելով 804 մ, հասնում է Թաթուլ, Սորիկ և Հակկո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետին:

«Լ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1617 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԹՈՒՋՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թթուջուր գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ձորագյուլիս գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Եղիպատրուշ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Վարդենիս գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Չքնաղ գյուղական համայնքին,

### **ԹԹՈՒՋՈՒՐ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

### **ԹԹՈՒՋՈՒՐ – ՁՈՐԱԳՂՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Թթուջուր, Ձորագյուլիս գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2463.4 մ, նիշով սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով անցնում 545 մ, հասնում 2537.7 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք, լանջերով թիվ 2-6 սահմանակետերով անցնում 2575 մ, հասնում թիվ թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ջրբաժանի թիվ 8-14 սահմանակետերով անցնելով 3742 մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16 սահմանակետով անցնում 1059 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից

ծորակով շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով անցնում 1718 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 160 մ, հասնում Թթուջուր-Ձորագլուխ միջհամայնքային ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նշված ճանապարհով անցնում 122 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 349 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև ձորակով շարունակվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 24-26 սահմանակետերով անցնում 671 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, որը գտնվում է անտառի կողքով հոսող առվի եզրին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, լանջով՝ թիվ 28-31 սահմանակետերով անցնելով 797 մ, հասնում է առվի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորակով, անցնում 1472 մ, հասնում ձորակի եզրին գտնվող Թթուջուր, Ձորագլուխ և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13209 մ է:

### **ԹԹՈՒՋՈՒՐ – ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Թթուջուր, Ձորագլուխ և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 209 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, քիչ հյուսիս-արևմուտք ջրբաժանով անցնում 1044 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 3-15 սահմանակետերով անցնելով 3273 մ, հասնում ջրբաժանի և ջրամբարի հատման կետում գտնվող Թթուջուր, Եղիպատրուշ և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4526 մ է:

## **ԹԹՈՒՋՈՒՐ – ՎԱՐՂԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Թթուջուր, Վարդենիս և Չքնաղ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ապարանի ջրամբարի եզրին, սահմանագիծը ջրամբարի կողքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 330 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրամբարի եզրագծի թիվ 3-5 սահմանակետերով անցնում 1177 մ, հասնում ջրամբարի եզրին գտնվող Թթուջուր, Վարդենիս և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1507 մ է:

## **ԹԹՈՒՋՈՒՐ – ՉՔՆԱՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Թթուջուր, Չքնաղ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրբաժանի և ձորակի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 1-7 սահմանակետով, անցնում 1087 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը անցնում 520 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով անցնում է 567 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով անցնում 373 մ, հասնում 2597 մ, նիշով բարձունքի գագաթի թիվ 11 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հետո կրկին հարավ, թիվ 12-15 սահմանակետերով անցնում 2826 մ, հասնում Ապարան-Թթուջուր միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, հատելով վերը նշված ճանապարհը, անցնում է 79 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 268 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, վարելահողերի միջնակով անցնում 139 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, վարելահողերի միջնակով անցնում 146 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 61 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 258 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 1436 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 326 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 649 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 156 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 255 մ, հասնում անտառի եզրով անցնող դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 922 մ, հասնում անտառի եզրին գտնվող Թթուջուր, Չքնաղ և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10066 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Իրինդ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վերին Սասնաշեն և «Բ»-«Գ» հատվածով՝ Դավթաշեն գյուղական համայնքներին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Կաթնաղբյուր և «Դ»-«Ե» հատվածով՝ Ոսկեթաս գյուղական համայնքներին, հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Ջովասար գյուղական համայնքին:

### **ԻՐԻՆԴ - ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Իրինդ, Վերին Սասնաշեն և Ջովասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2538 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 1118 մ, հասնում Իրինդ, Վերին Սասնաշեն և Դավթաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգույցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3656 մ է:

### **ԻՐԻՆԴ - ԴԱՎԹԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Իրինդ, Դավթաշեն և Վերին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1597 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 5 սահմանակետով անցնում 692 մ, հասնում է դաշտային ճանապարհի և ձորակի հատման տեղում գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով անցնող գետակի հոսանքի ուղղությամբ անցնում 3172 մ, թիվ 7

սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով, հատում, բլրագագաթները թիվ 8-11 սահմանակետերով անցնում է 2366 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի ոլորանների թիվ 13-48 սահմանակետերով անցնելով 5847 մ, հասնում է ձորի եզրին գտնվող, Իրինդ, Դավթաշեն և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգույցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13674 մ է:

### **ԻՐԻՆԴ - ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Իրինդ, Կաթնաղբյուր և Ոսկեթաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 299 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով և բլրագագաթներով, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 2266 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 5 սահմանակետով անցնում 1389 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2626 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում է 284 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 469 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում միջհամայնքային ճանապարհը, ձորի թիվ 10-42 սահմանակետերով անցնելով 5712 մ, հասնում է երկու ձորերի հատման տեղում գտնվող թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք, ապա կրկին հարավ, հատելով միջհամայնքային ճանապարհը, առվով՝ թիվ 44-45 սահմանակետերով անցնում է 921 մ, հասնում բլրի վրա գտնվող թիվ 46 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հետո կրկին հարավ-արևելք, բարձունքի գագաթներով, թիվ 47-48 սահմանակետերով անցնում է 1124 մ, հասնում է Իրինդ, Կաթնաղբյուր և Դավթաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգույցային սահմանակետին:

«Գ» -«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15089 մ է:

## **ԻՐԻՆԴ - ՈՍԿԵԹԱՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Իրինդ, Ոսկեթաս և Ջովասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգույցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, լանջով անցնելուն 223 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 284 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 875 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով, բնական աղբյուրների մոտով, թիվ 6-8 սահմանակետերով անցնելով 1117 մ, հասնում է Իրինդ, Ոսկեթաս և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգույցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2499 մ:

## **ԻՐԻՆԴ - ՋՈՎԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Իրինդ, Ջովասար և Վերին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, սարալանջով, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2407 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 245 մ, հասնում Իրինդ, Ջովասար և Ոսկեթաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգույցային սահմանակետի:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2652 մ է :

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՐՈՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լեռնարոտ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շիրակի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վերին Սասունի կ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Շամիրամ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ագարակական գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Դիան, «Զ»-«Է» հատվածով՝ Ագարակական, «Է»-«Ը» հատվածով՝ Մեծաձոր, «Ը»-«Թ» հատվածով՝ Վերին Բազմաբերդ, «Թ»-«Ժ» հատվածով՝ Ներքին Սասնաշեն և «Ժ»-«Ա» հատվածով՝ Վերին Սասնաշեն գյուղական համայնքներին:

### **ԼԵՌՆԱՐՈՏ – ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Շիրակի մարզերի սահմանների հետ:

### **ԼԵՌՆԱՐՈՏ – ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սարի գագաթին գտնվող Լեռնարոտ, Վերին Սասունի կ գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 670 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջերով, հատելով բարձունքների գագաթներ և դաշտային ճանապարհ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 1394 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 481 մ, հասնում սարի գագաթի թիվ 6 սահմանակետին,



ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջերով՝ հատելով դաշտային ճանապարհը, թիվ 7-8 սահմանակետերով անցնում է 1428 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 539 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, թիվ 11 սահմանակետով անցնելով 1507 մ, հասնում է սարի գագաթին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, շրջանցում սարը, ապա թեքվում է դեպի հարավ, միանում ձորին, ձորով անցնում 8828 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 311 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը և լանջով անցնելով 932 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք, ապա արևելք, ձորակով անցնում 2288 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Վերին Սասունիկ-Լեռնարոտ միջհամայնքային ճանապարհը, ջրային սահմանով, թիվ 17-21 սահմանակետերով անցնում է 2052 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, այստեղից առվով շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23 սահմանակետով անցնում 899 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 25-27 սահմանակետերով անցնում է 589 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվակով, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 1033մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 257 մ, հասնում Լեռնարոտ, Վերին Սասունիկ և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 23207 մ է:

### **ԼԵՌՆԱՐՈՏ – ՇԱՄԻՐԱՄ ԱԿՐՍԱՆԱԳԻԾՆ՝ «Գ»-«Դ»**

Լեռնարոտ, Շամիրամ և Ագարակավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-

արևելք, լանջով անցնում 289 մ, հասնում Լեռնարոտ, Շամիրամ և Վերին Սասունիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 289 մ է:

### **ԼԵՌՆԱՐՈՏ – ԱԳԱՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Լեռնարոտ, Ագարակավան և Դիան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1213 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով ձորակներ և բարձունքներ, թիվ 7-9 սահմանակետերով անցնում է 1534 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11 սահմանակետերով անցնում 837 մ, հասնում Լեռնարոտ, Ագարակավան և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային կետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3584 մ է:

### **ԼԵՌՆԱՐՈՏ – ԴԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Լեռնարոտ, Ագարակավան և Դիան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավով դեպի հարավ-արևելք, սարալանջով, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1744 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևմուտք, ձորով անցնում 2810 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նույն ձորի թիվ 5-27 սահմանակետերով անցնելով 4442 մ, հասնում է Լեռնարոտ, Դիան և Ագարակավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8996 մ է:

## **ԼԵՌՆԱՐՈՏ – ԱԳԱՐԱԿԱՎԱՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Բարձունքի գագաթին գտնվող Լեռնարոտ, Ագարակավան և Մեծաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, քիչ հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1147 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով՝ հատելով ժայռեր, թիվ 3 սահմանակետով անցնում է 1585 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Լեռնարոտ, Ագարակավան և Դիան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2732 մ է:

## **ԼԵՌՆԱՐՈՏ – ՄԵԾԱՁՈՐ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»**

Լեռնարոտ, Մեծաձոր և Վերին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով՝ թիվ 1 սահմանակետով անցնում 575 մ, հասնում բարձունքի գագաթին գտնող Լեռնարոտ, Մեծաձոր և Ագարակավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 575 մ է:

## **ԼԵՌՆԱՐՈՏ – ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»**

Լեռնարոտ, Վերին Բազմաբերդ և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 1090 մ, հասնում բարձունքի գագաթին գտնող թիվ 1 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 2 սահմանակետով անցնելով 2002 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնող Լեռնարոտ, Վերին Բազմաբերդ և Մեծաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3092 մ է:

## **ԼԵՌՆԱՐՈՏ – ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ժ»**

Լեռնարոտ, Ներքին Սասնաշեն և Վերին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ժայռերի եզրով, թիվ 1 սահմանակետով անցնում 1143 մ, հասնում է Լեռնարոտ, Ներքին Սասնաշեն և Վերին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1143 մ է:

## **ԼԵՌՆԱՐՈՏ – ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ժ»-«Ա»**

Լեռնարոտ, Վերին Սասնաշեն գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով, թիվ 1 սահմանակետով անցնում 1469 մ, հասնում Լեռնարոտ, Վերին Սասնաշեն և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «ժ» հանգուցային սահմանակետին:

«ժ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1469 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լուսագյուղ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սարալանջ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Կայք գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Ապարան քաղաքային և «Ե»-«Զ» հատվածով՝ Միրաք գյուղական համայնքներին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Մելիքգյուղ գյուղական համայնքին:

### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Լուսագյուղ, Սարալանջ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի 2792 մ նիշ ունեցող գագաթի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 467 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 787 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 722 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ձորակները, թիվ 4-5 սահմանակետերով անցնում է 1575 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 517 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 361 մ, հասնում ձորակուն

գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ձորակի ոլորաններով՝ թիվ 9 սահմանակետով անցնելով 1101 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 633 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով հոսող առվակով՝ թիվ 13 սահմանակետով անցնում 868 մ, հասնում ձորակուն գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 219 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղ թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 143 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով անցնում 384 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, դաշտային ճանապարհով, ապա վարելահողերի միջնակով անցնելով 2508 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լուսազյուղ, Սարալանջ և Կայք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10285 մ է:

#### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ԿԱՅՔ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Լուսազյուղ, Կայք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 334 մ, հասնում Լուսազյուղ, Կայք և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 334 մ է:

#### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ԱՊԱՐԱՆ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Լուսազյուղ, Միրաք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2549.6 մ նիշ ունեցող սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ ջրբաժանի, թիվ 1-2 սահմանակետերով, անցնում 1669 մ, հասնում ջրբաժանի թիվ 3 սահմանակետին,

որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով՝ թիվ 4-5 սահմանակետերով, անցնում 1018 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 204 մ, հասնում Ապարան-Լուսազյուղ միջհամայնքային ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղ հատում է ճանապարհը, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով անցնում 85 մ, հասնում ճանապարհի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորով անցնում 1102 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, Ապարան քաղաքի տնամերձերի կողքով անցնելով 609 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Լուսազյուղ, Կայք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4687 մ է:

#### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ՄԻՐԱՔ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Լուսազյուղ, Միրաք և Մելիքգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, անցնում 238 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 484 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 180 մ, հասնում 2549.6 մ, նիշով սարի գագաթի գտնվող «Դեվեբոյրուն» կոչվող գեոդեզիական՝ Լուսազյուղ, Միրաք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 902 մ է:

#### **ԼՈՒՍԱԳՅՈՒՂ – ՄԵԼԻՔԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Լուսազյուղ, Մելիքգյուղ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2945 մ նիշով սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, անցնում 510 մ, թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք,

ջրբաժանով անցնում 474 մ, հասնում 2760 մ նիշ ունեցող «Թուխմանուկ» սարի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 805 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ջրբաժանով՝ թիվ 4 սահմանակետով, անցնում 678 մ, հասնում ձորակի և ջրբաժանի հատման կետում գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 6-7 սահմանակետով անցնելով 1619 մ, հասնում Լուսագյուղ, Մելիքգյուղ և Միրաք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4086 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Լուսակն գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Դաշտադեն գյուղական համայնքին, հյուսիսից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Աշնակ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ ՀՀ Արմավիրի մարզի վարչական սահմանին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ե» հատվածով՝ Արտեմի գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Դղմասար գյուղական համայնքին:

### **ԼՈՒՍԱԿՆ – ԴԱՇՏԱԴԵՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Լուսակն, Դաշտադեն և Դղմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ձորակի թիվ 1-41 սահմանակետերով անցնում 2608 մ, հասնում ձորակի եզրի թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 43-45 սահմանակետերով անցնում 736 մ, հասնում թիվ 46 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 187 մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 48-51 սահմանակետերով անցնելով 405 մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք և արևելք, թիվ 53-59 սահմանակետերով անցնելով 890 մ, հասնում է Լուսակն, Դաշտադեն և Աշնակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 4826 մ է:

### **ԼՈՒՍԱԿՆ – ԱՇՆԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Լուսակն, Աշնակ և Դաշտադեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Թալին-Արաքս ավտոճանապարհից

դեպի Աշնակ թեքվող ճանապարհների խաչմերուկում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1078 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 465 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 785 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում ձորակը, և թիվ 6 սահմանակետով անցնելով 1517 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այստեղից սահմանագիծը դարձյալ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 8-11 սահմանակետերով անցնում 1631 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով, թիվ 13-16 սահմանակետերով անցնելով 605 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 6061 մ, հասնում է Լուսակն, Աշնակ գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12142 մ է:

#### **ԼՈՒՍԱԿՆ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

#### **ԼՈՒՍԱԿՆ – ԱՐՏԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Լուսակն, Արտենի և Դոմասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 780 մ, հասնում 1258 մ նիշ ունեցող բարձունքի գագաթի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 643 մ, հաջորդ բարձունքի գագաթի թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ձորակը, ջրբաժանի թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 1518 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 915 մ, հասնում 1233 մ նիշ ունեցող բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք,

թիվ 10 սահմանակետով անցնում 753 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ձորակի ոլորապտույտներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակով, այնուհետև Մաստարա գետով, թիվ 12-37 սահմանակետերով անցնելով 4032 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող Լուսակն, Արտենի գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8641 մ է:

#### **ԼՈՒՍԱԿՆ – ԴԴՄԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Լուսակն, Դդմասար և Դաշտադեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, քիչ հյուսիս-արևմուտք, լանջերով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 2316 մ, հասնում է բլրի վրա գտնվող Լուսակն, Դդմասար և Արտենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2316 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ծաղկահովիտ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վարդաբլուր գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կանիաշիր գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Շենկանի, «Դ»-«Ե» հատվածով՝ Նիգավան և «Ե»-«Զ» հատվածով՝ Ծաղկաշեն գյուղական համայնքներին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Արագած գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Գեղաձոր և «Ը»-«Ա» հատվածով՝ Սադունց գյուղական համայնքներին:

### **ԾԱՂԿԱՅՈՎԻՏ – ՎԱՐՎԱԲԼՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Վարդաբլուր և Սադունց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, դաշտային ճանապարհի թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1413 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Վարդաբլուր և Կանիաշիր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1413 մ է:

### **ԾԱՂԿԱՅՈՎԻՏ – ԿԱՆԻԱՇԻՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ծաղկահովիտ, Կանիաշիր և Վարդաբլուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1639 մ, հասնում Ալագյազ-Արթիկ պետական նշանակության ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 1

սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, և հարավ-արևելք ավտոճանապարհի թիվ 2-3 սահմանակետերով անցնում 655 մ, հասնում խաղահրապարակի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, խաղահրապարակի եզրով անցնում 65 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողերի միջնակով անցնում 74 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողերի միջնակով անցնում 292 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 37 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 1619 մ, հասնում դաշտային ճանապարհի և գետակի հատման տեղում գտնվող Ծաղկահովիտ, Կանիաշիր և Շենկանի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4382 մ է:

#### **ԾԱՂԿԱՅՈՎԻՏ – ՇԵՆԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Դաշտային ճանապարհի և գետակի հատման տեղում գտնվող Ծաղկահովիտ, Շենկանի և Կանիաշիր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևմուտք, գետակի հունով անցնում 2487 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 466 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 714 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 145 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձունքներով, թիվ 7-9 սահմանակետերով անցնելով 1043 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող Ծաղկահովիտ, Շենկանի և Նիգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետի:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4855 մ է:

## **ԾԱՂԿԱՅՈՒԿՆԵՐ – ՆԻԳԱՎԱՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ծաղկահովիտ, Շենկանի և Նիգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1910 մ, հասնում Շիշթափա սարի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով թիվ 6 սահմանակետով անցնում 305 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջերով և բարձունքների գագաթներով անցնում 3152 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 9-15 սահմանակետերով անցնում 2709 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, այնուհետև հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 17-18 սահմանակետով անցնելով 1063 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, բարձունքների գագաթների թիվ 20-23 սահմանակետերով անցնելով 1400 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, որը գտնվում է ժայռի եզրին: Թիվ 24 սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ժայռի ստորոտով անցնող ձորի թիվ 25-33 սահմանակետերով անցնում 594 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 252 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Ծաղկահովիտ, Նիգավան և Ծաղկաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11386 մ է:

## **ԾԱՂԿԱՅՈՒԿՆԵՐ – ԾԱՂԿԱՇԵՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Բարձունքի գագաթին գտնվող Ծաղկահովիտ, Ծաղկաշեն և Նիգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 286 մ, հասնում սարի

գագաթին գտնվող Ծաղկահովիտ, Ծաղկաշեն և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 286 մ է:

#### **ԾԱՂԿԱՅՈՎԻՏ – ԱՐԱԳԱԾ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԸ՝ «Զ»-«Ե»**

Ծաղկահովիտ, Ծաղկաշեն և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, լանջով՝ թիվ 1 սահմանակետով անցնում 842 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 3-27 սահմանակետերով անցնելով 2962 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Արագած և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3804 մ է:

#### **ԾԱՂԿԱՅՈՎԻՏ – ԳԵՂԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԸ՝ «Ե»-«Ը»**

Ծաղկահովիտ, Գեղաձոր և Սադունց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնում 2818 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 2805 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների գագաթներով, ժայռի եզրով, թիվ 6-10 սահմանակետերով անցնելով 2473 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Գեղաձոր և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8096 մ է:

## ԾԱՂԿԱՅՈՒԿՑ – ՍԱՊՈՒՆՑ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Ղաշտային ճանապարհի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Սաղունց և Վարդաբլուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 650 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 454 մ, հասնում Ղաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևելք, Ղաշտային ճանապարհի թիվ 4-5 սահմանակետերով անցնում 788 մ, հասնում է Ալազյազ-Արթիկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նշված ավտոճանապարհով անցնում 454 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում ավտոճանապարհը, Ղաշտային ճանապարհով անցնում 117 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Ղաշտային ճանապարհի թիվ 9 սահմանակետով անցնում 1036 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որը գտնվում է Ծաղկահովիտ-Սաղունց ավտոճանապարհի և այդ ճանապարհից աջ թեքվող Ղաշտային ճանապարհի հատման խաչմերուկում: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 689 մ, հասնում բնակավայրի եզրագծի մոտ գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծի թիվ 12 սահմանակետով անցնում 871 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատելով Ղաշտային ճանապարհներ և ձորակներ, Ղաշտային ճանապարհով, լանջով, ապա կրկին Ղաշտային ճանապարհով անցնում է 4787 մ, հասնում Ղաշտային ճանապարհի եզրին գտնվող Ծաղկահովիտ, Սաղունց և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9846 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ծաղկաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Քուչակ գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Արագած գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ծաղկահովիտ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Նիգավան գյուղական համայնքին:

### **ԾԱՂԿԱՇԵՆ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՈՒՄ «Ա»-«Բ»**

Ծաղկաշեն, Քուչակ և Նիգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 3843 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևելք, հատում ձորակը, թիվ 7 սահմանակետով անցնում 1023 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնելով 964 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 827 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-15 սահմանակետերով, անցնելով է 699 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 151 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 18 սահմանակետով անցնում 858 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 239 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, ձորակով անցնում է 1273 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, պաս հարավ-արևելք, թիվ 22-23

սահմանակետերով անցնելով 828 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով գետակը, թիվ 25 սահմանակետով անցնում 942 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում Ծաղկաշեն-Քուչակ միջհամայնքային ճանապարհը, թիվ 27-29 սահմանակետերով անցնելով 1094 մ, հասնում է թիվ 30 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, թիվ 31 սահմանակետով անցնում 254 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 196 մ, հասնում Ծաղկաշեն, Քուչակ և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13191 մ է:

### **ԾԱՂԿԱՇԵՆ – ԱՐԱԳԱԾ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

### **ՆԻԳԱՎԱՆ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Նիգավան, Քուչակ և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով անցնում 806 մ, հասնում ձորի եզրին գտնվող Նիգավան, Քուչակ և Ծաղկաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 806 մ է:

### **ՆԻԳԱՎԱՆ – ԾԱՂԿԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Նիգավան, Ծաղկաշեն և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ, ձորի թիվ 1-16 սահմանակետերով, անցնելով 1597 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 18 սահմանակետով անցնում 980 մ, հասնում Նիգավան, Ծաղկաշեն և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2577 մ է:

## ՆԻԳԱՎԱՆ – ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Նիգավան, Շենկանի և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1910 մ, հասնում Շիշթափա սարի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով թիվ 6 սահմանակետով անցնում 305 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջերով և բարձունքների գագաթներով անցնում 3152 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 9-15 սահմանակետերով անցնում 2709 մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, այնուհետև հարավ-արևմուտք, ջրբաժանի գագաթների թիվ 17-18 սահմանակետով անցնելով 1063 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 19 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, բարձունքների գագաթների թիվ 20-23 սահմանակետերով անցնելով 1400 մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, որը գտնվում է ժայռի եզրին: Թիվ 24 սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ժայռի ստորոտով անցնող ձորի թիվ 25-33 սահմանակետերով անցնում 594 մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 252 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Նիգավան, Ծաղկահովիտ և Ծաղկաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11386 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վերին Բազմաբերդ գյուղական համայնքին, արևելքից՝ «Բ»-«Գ» հատվածով Կաքավաձոր և «Գ»-«Դ» հատվածով՝ Արուճ գյուղական համայնքներին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Պարտիզակ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից՝ «Ե»-«Զ» հատվածով Արմավիրի մարզին, արևմուտքից՝ «Զ»-«Ա» հատվածով՝ Ներքին Սասնաշեն գյուղական համայնքին:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով բլուրներ, ձորով և դաշտային ճանապարհով, անցնում է 842 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատելով դաշտային և միջհամայնքային ճանապարհներ, ձորով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 2766 մ, հասնում Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ և Կաքավաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3608 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ԿԱՔԱՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ և Կաքավաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 483 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ձորով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 803 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակ և

բլուրներ, թիվ 7 սահմանակետով անցնում է 949 մ, հասնում ձորի եզրին գտնող թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հատելով Ն.Բազմաբերդ-Կաքավաձոր միջհամայնքային և Երևան-Գյումրի հանրապետական նշանակության ճանապարհները, ձորի թիվ 9-15 սահմանակետերով անցնում է 1437 մ, հասնում Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3671 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ԱՐՈՒՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ներքին Բազմաբերդ, Կաքավաձոր և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը Ներքին Բազմաբերդ համայնքի բնակավայրի արևելյան սահմանագծով անցնող ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ, ձորի թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1116 մ, հասնում Ներքին Բազմաբերդ, Արուճ և Պարտիզակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1116 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ՊԱՐՏԻԶԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ներքին Բազմաբերդ, Պարտիզակ և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Ներքին Բազմաբերդ համայնքի բնակավայրի հարավային եզրագծով անցնում 994 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 78 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 891 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որը գտնվում է ձորի եզրին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 4-24 սահմանակետերով անցնելով 1944 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 26 սահմանակետով, դաշտային ճանապարհով անցնում է 591 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ձորով՝ թիվ 28-30 սահմանակետերով անցնում 968 մ, հասնում է թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, քիչ հյուսիս-արևմուտք,

ծորով, թիվ 32-38 սահմանակետերով անցնելով 602 մ, հասնում է ձորի եզրի թիվ 39 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորով, թիվ 40-59 սահմանակետերով անցնելով 11832 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ներքին Բազմաբերդ, Պարտիզակ գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17899 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

«Ե»-«Զ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

### **ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ - ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծն թեքվում է դեպի արևմուտք, անցնում 120 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով թիվ 2 սահմանակետով անցնելով 583 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ -արևելք, դաշտային ճանապարհի թիվ 4-6 սահմանակետերով անցնում 631 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, հատելով միջհամայնքային ճանապարհը, ձորակներ, բլուրներ, թիվ 8-11 սահմանակետերով անցնում է 1754 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ, ձորի թիվ 13-32 սահմանակետերով անցնելով 3420 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 515 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, ձորակով անցնում 451 մ, հասնում ձորակի եզրի թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորակի թիվ 36-39 սահմանակետերով անցնելով 591 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1523 մ, հասնում թիվ 41 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 2286 մ,

հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2411 մ, հասնում ձորի եզրին գտնող թիվ 43 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հետո արևմուտք, ձորի թիվ 44-46 սահմանակետերով անցնելով 3667 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 47 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 48 սահմանակետերով անցնում 785 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք՝ թիվ 50 սահմանակետով անցնում 2265 մ, հասնում Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21002 մ է:



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ՍԱՍՈՒՆԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ներքին Սասնաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը՝ հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լեռնարոտ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վերին Բազմաբերդ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Վերին Սասնաշեն գյուղական համայնքի:

### **ՆԵՐՔԻՆ ՍԱՍՈՒՆԱՇԵՆ – ԼԵՌՆԱՐՈՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ներքին Սասնաշեն, Լեռնարոտ և Վերին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ժայռերի եզրով, թիվ 1 սահմանակետով անցնում 1143 մ, հասնում է Ներքին Սասնաշեն, Լեռնարոտ և Վերին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1143 մ է:

### **ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ – ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»**

Ներքին Սասնաշեն, Վերին Բազմաբերդ և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով թիվ 1 սահմանակետով անցնում 1092 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 3 սահմանակետով, անցնում 421 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 3224 մ, հասնում, թիվ 5 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակը, լանջով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 1771 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 8

սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով անցնում 661 մ, հասնում ձորի եզրին գտնող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 3553 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, այնուհետև ձորով շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 11-39 սահմանակետերով անցնելով 4810 մ, հասնում է ձորի եզրին գտնող թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 47 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով միջհամայնքային ճանապարհը, թիվ 42-43 սահմանակետերով անցնում 1166 մ, հասնում Ներքին Սասնաշեն, Վերին Բազմաբերդ և Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16745 մ է:

#### **ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ – ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ և Վերին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծն թեքվում է դեպի արևմուտք, անցնում 120 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով թիվ 2 սահմանակետով անցնելով 583 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ -արևելք, դաշտային ճանապարհի թիվ 4-6 սահմանակետերով անցնում 631 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, հատելով միջհամայնքային ճանապարհը, ձորակներ, բլուրներ, թիվ 8-11 սահմանակետերով անցնում է 1754 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ, ձորի թիվ 13-32 սահմանակետերով անցնելով 3420 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 515 մ, հասնում թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, ձորակով անցնում 451 մ, հասնում ձորակի եզրի թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորակի թիվ 36-39 սահմանակետերով անցնելով 591 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1523 մ,

հասնում թիվ 41 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 2286 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2411 մ, հասնում ձորի եզրին գտնող թիվ 43 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հետո արևմուտք, ձորի թիվ 44-46 սահմանակետերով անցնելով 3667 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 47 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 48 սահմանակետերով անցնում 785 մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք՝ թիվ 50 սահմանակետով անցնում 2265 մ, հասնում Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21002 մ է:

#### **ՆԵՐՔԻՆ ՍԱՍՈՒՆԱՇԵՆ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

#### **ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ – ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծն թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 611 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, ձորակով անցնում 975 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով և բարձունքներով անցնում 5504 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 5200 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 165 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի ոլորաններով, թիվ 6-66 սահմանակետերով անցնելով 11736 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 67 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ, հարթ տեղանքով անցնում 4562 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 68 սահմանակետին: Թիվ 68 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 69-80 սահմանակետերով անցնում 6922 մ, հասնում ձորի եզրին գտնվող Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 35672 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նոր Ամանոս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արուճ և «Բ»-«Գ» հատվածով՝ Շամիրամ գյուղական համայնքներին, արևելքից և հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Նոր Եղեսիա գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արմավիրի մարզի սահմանին, հյուսիսից և արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Պարտիզակ գյուղական համայնքին:

### **ՆՈՐ ԱՄԱՆՈՍ - ԱՐՈՒՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նոր Ամանոս, Արուճ և Պարտիզակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 228 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվով հասնում բնակավայրի հյուսիս-արևելյան մասը, ապա թեքվում է դեպի արևելք, և անցնելով 2834 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 375 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ոռոգման առվի թիվ 6 սահմանակետով անցնում 409 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, առվով, թիվ 8-12 սահմանակետերով անցնելով 424 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ոռոգման առվով անցնում 577 մ, հասնում Նոր-Ամանոս, Արուճ և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4828 մ է:

## **ՆՈՐ ԱՄԱՆՈՍ – ՇԱՄԻՐԱՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նոր Ամանոս, Շամիրամ և Արուճ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում է 395 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 522 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջերով, թիվ 6-8 սահմանակետերով անցնում 959 մ, հասնում է Նոր Ամանոս, Շամիրամ և Նոր Եղեսիա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 876 մ է:

## **ՆՈՐ ԱՄԱՆՈՍ –ՆՈՐ ԵՂԵՍԻԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Նոր Ամանոս, Նոր Եղեսիա և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք ձորով, ապա դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնում 880 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ, ձորով անցնում է 2582 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 617 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 777 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հետո հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի ոլորանների թիվ 6-23 սահմանակետերով անցնելով 5325 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1345 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող Նոր Ամանոս, Նոր Եղեսիա գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11526 մ է:

## **ՆՈՐ ԱՄԱՆՈՍ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ» - «Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

## **ՆՈՐ ԱՄԱՆՈՍ – ՊԱՐՏԻՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Նոր Ամանոս, Պարտիզակ և Արուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 1474 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնելով 826 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորի թիվ 9-14 սահմանակետերով անցնում 1343 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 501 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 17-21 սահմանակետերով անցնելով 2375 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, ձորի ոլորանների թիվ 23-40 սահմանակետերով անցնելով 6792 մ, հասնում է Նոր Ամանոս, Պարտիզակ գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13311 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՂԵՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նոր Եղեսիա գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շամիրամ գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կոչ և «Գ»-«Դ» հատվածով՝ Արագածոտն գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից՝ «Ե»-«Ա» հատվածով՝ Նոր Ամանոս գյուղական համայնքին:

### **ՆՈՐ ԵՂԵՍԻԱ – ՇԱՄԻՐԱՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նոր Եղեսիա, Շամիրամ և Նոր Ամանոս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 149 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, հատելով ջրբաժանը թիվ 2 սահմանակետով անցնում է 217 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 4-10 սահմանակետերով անցնում 1643 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 880 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 205 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 304 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Նոր Եղեսիա, Շամիրամ և Կոչ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3398 մ է:



## **ՆՈՐ ԵՂԵՍԻԱ – ԿՈՇ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նոր Եղեսիա, Կոշ և Շամիրամ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հարավ, ապա կրկին հարավ-արևմուտք և հարավ, անցնում 3175 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հարթավայրային ռելիեֆով անցնում 411 մ, հասնում Նոր Եղեսիա, Կոշ և Արագածոտն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3587 մ է:

## **ՆՈՐ ԵՂԵՍԻԱ – ԱՐԱԳԱԾՈՏՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Նոր Եղեսիա, Արագածոտն և Կոշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձունքի գագաթով՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 2622 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 189 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 866 մ, հասնում Նոր Եղեսիա, Արագածոտն գյուղական համայնքների և Արմավիրի մարզերի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3677 մ է:

## **ՆՈՐ ԵՂԵՍԻԱ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտն և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

## ՆՈՐ ԵՂԵՍԻԱ – ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Նոր Եղեսիա, Նոր Ամանոս և Շամիրամ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք ձորով, ապա դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնում 880 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ, ձորով անցնում է 2582 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 617 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 777 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հետո հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի ոլորանների թիվ 6-23 սահմանակետերով անցնելով 5325 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1345 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող Նոր Եղեսիա, Նոր Ամանոս գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11526 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շենավան գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ջրամբար գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Հարթավան և «Գ»-«Դ» հատվածով՝ Վարդենուտ գյուղական համայնքներին, հյուսիսից «Դ»-«Ե» հատվածով՝ Արագած և «Ե»-«Ա» հատվածով՝ Քուչակ գյուղական համայնքներին:

### **ՇԵՆԱՎԱՆ – ՋՐԱՄԲԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Շենավան, Ջրամբար և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրամբարի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրամբարի արևմտյան եզրով, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից ջրամբարի միջով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ, ջրամբարի միջով, թիվ 11 սահմանակետով անցնում 2378 մ, հասնում է ջրամբարի մեջ գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ջրամբարի միջով, թիվ 13-14 սահմանակետերով անցնում 241 մ, հասնում ջրամբարի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրհան կայանի տարածքի եզրագծով անցնում 46 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 128 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 105 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, արտադրական մասի եզրագծով, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 157 մ, հասնում է Շենավան, Ջրամբար և Հարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3570 մ է:

## **ՇԵՆԱՎԱՆ – ՀԱՐՔԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Շենավան, Հարթավան և Վարդենուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 173 մ, հասնում Հարթավան-Շենավան միջհամայնքային ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, նշված ճանապարհով անցնում 128 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, տնամերձերի եզրագծով, թիվ 3 սահմանակետով անցնում 340 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, առվով անցնում 750 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հետո հարավ-արևելք, անցնում 606 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղ հատում է Երևան-Վանաձոր մայրուղին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 422 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք անցնում 81 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 2051 մ, և հատելով Ջրամբար համայնք տանող ավտոճանապարհը, հասնում է թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողերի միջնակով՝ թիվ 11 սահմանակետով անցնելով 479 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողերի միջնակով, թիվ 13-16 սահմանակետերով անցնելով 1228 մ, հասնում է Շենավան, Հարթավան և Ջրամբար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6258 մ է:

## **ՇԵՆԱՎԱՆ – ՎԱՐԴԵՆՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շենավան, Վարդենուտ և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ուղիղ գծով՝ բարձունքներով անցնում 2563 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից ձորով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, այնուհետև հյուսիս-արևելք, ձորի թիվ 2-14 սահմանակետերով անցնում է 5380 մ, հասնում

ծորի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, առվով անցնում 1394 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով առու, լանջերով և գազաքներով, թիվ 17-19 սահմանակետերով անցնում է 1137 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, ճանապարհով անցնում 3716 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 132 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 1536 մ, հասնում Շենավան, Վարդենուտ և Չարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15856 մ է:

#### **ՇԵՆԱՎԱՆ – ԱՐԱԳԱԾ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Շենավան, Արագած և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետակով, թիվ 1-4 սահմանակետերով անցնելով 887 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 231 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, հատելով Արագած-Շենավան միջհամայնքային ճանապարհը թիվ 7 սահմանակետով անցնում է 182 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 9 սահմանակետով անցնում 741 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 135 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, հատելով գետակը և Վարդենուտ-Արագած միջհամայնքային ճանապարհը, բնակավայրի հարավով անցնող ճանապարհի հյուսիսային եզրով անցնում է 3442 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 13 սահմանակետով անցնում 830 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորով անցնում 1665 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 56 մ, հասնում դաշտային

ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջերով, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1638 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ձորակով հոսող Գեղարոտ գետակով, այնուհետև լանջերով անցնում 5688 մ, հասնում է Շենավան, Արագած և Վարդենուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15496 մ է:

### **ՇԵՆԱՎԱՆ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Շենավան, Քուչակ և Ջրամբար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրամբարի արևմտյան եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով, անցնելով 697 մ, հասնում է ջրամբարի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 299 մ, հասնում է ջրամբարի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրի եզրով՝ թիվ 7 սահմանակետով անցնում 613 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, որը գտնվում է ձորակի և ջրամբարի հատման տեղում: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը և Քուչակ-Աշտարակ պետական նշանակության ճանապարհը, անցնում է 3088 մ, հասնում Շենավան, Քուչակ և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4696 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շողակն գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Եղիպատրուշ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով Կոտայքի մարզին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Երնջատափ և «Դ»-«Ա» հատվածով՝ Ջրամբար գյուղական համայնքին:

### **ՇՈՂԱԿՆ – ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Եղիպատրուշ, Շողակն և Ջրամբար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ապարանի ջրամբարի եզրին, սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 831 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, թիվ 4 սահմանակետով անցնում 221 մ, հասնում է ջրբաժանի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 6 սահմանակետով անցնում 645 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորով անցնում 187 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս, ապա արևելք, լանջերով՝ թիվ 9-17 սահմանակետերով անցնում 891 մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, հատելով ձորակը, թիվ 19 սահմանակետով անցնում 598 մ, հասնում 2009.2 մ նիշ ունեցող սարի գագաթի թիվ 20 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, ձորով՝ թիվ 21-22 սահմանակետերով անցնում 496 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 136 մ, հասնում անտառի եզրին թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 25-26 սահմանակետերով անցնելով 869 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, այնուհետև

թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակներ, թիվ 28-31 սահմանակետով անցնելով 964 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, բարձունքների գագաթների թիվ 33-34 սահմանակետերով անցնում 325 մ, հասնում է ջրբաժանի թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով անցնում 248 մ, հասնում ջրբաժանի թիվ 36 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 284 մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք ապա հարավ-արևելք, թիվ 38-41 սահմանակետերով անցնելով 1044 մ, հասնում «Կուշի» կոչվող եռանկյունաչափական թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 43 սահմանակետով անցնում 1064 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 44 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 45-46 սահմանակետերով անցնելով 999 մ, հասնում է թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 369 մ, հասնում թիվ 48 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում ձորը, անցնում 406 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, այստեղից դարձյալ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում գետը, լանջով անցնում 391 մ, հասնում Շողակն, Եղիպատրուշ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10968 մ է:

#### **ՇՈՂԱԿՆ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

#### **ՇՈՂԱԿՆ – ԵՐՆՋԱՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Շողակն, Երնջատափ և Ջրամբար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի և ձորակի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 190 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է



դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակը, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 691 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8-12 սահմանակետերով անցնում է 1022 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 502 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 546 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 153 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 21-23 սահմանակետերով անցնում 934 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այստեղ հատում է դաշտային ճանապարհը, թեքվում դեպի հարավ, թիվ 25-29 սահմանակետերով անցնում 1322 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 621 մ, հասնում ձորակի եզրին գտնվող Շողակն, Երնջատափ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5981 մ է:

### **ՇՈՂԱԿՆ – ՋՐԱՄԲԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Շողակն, Ջրամբար և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ապարանի ջրամբարի արևելյան եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հետո հարավ-արևելք, ջրամբարի արևելյան եզրագծի թիվ 1-6 սահմանակետով անցնում 1301 մ, հասնում ջրամբարի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ձորակի թիվ 8-10 սահմանակետերով անցնում 464 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ճանապարհի թիվ 13-26 սահմանակետերով անցնում 2420 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք և անցնելով 81 մ, հասնում է Շողակն, Ջրամբար և Երնջատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4266 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՂԱՐՇԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շղարշիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կաթնաղբյուր գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Եղնիկ գյուղական համայնքին, հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Կարմրաշեն գյուղական համայնքին:

### **ՇՂԱՐՇԻԿ – ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Շղարշիկ, Կաթնաղբյուր և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջերով, բլրագագաթներով, հատելով ձորակներ, անցնում է 2497 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, լանջով անցնում 127 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, սարալանջով անցնում 620 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով թիվ 4 սահմանակետով անցնում 714 մ, հասնում է բլրագագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, հատում դաշտային և Շղարշիկ-Իրինդ միջհամայնքային ճանապարհը, թիվ 6-11 սահմանակետերով անցնում է 2886 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 13 սահմանակետերով անցնում 608 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը ձորով շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-22 սահմանագծերով անցնում 2016 մ, հասնում Կաթնաղբյուր համայնքի բնակավայրի հյուսիսային եզրագծով անցնող ճանապարհի հետ հատման տեղում գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հետո արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, Կաթնաղբյուրի բնակավայրի հյուսիսային եզրագծով անցնող ճանապարհի թիվ 24-26 սահմանագծերով

անցնելով 1474 մ, հասնում է Շղարշիկ, Կաթնաղբյուր և Եղնիկ գյուղական համայնքների տարաքնների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10943 մ է:

#### **ՇՂԱՐՇԻԿ – ԵՂՆԻԿ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Շղարշիկ, Եղնիկ և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարահարթային ռելիեֆով, հատելով դաշտային և միջհամայնքային ճանապարհներ, թիվ 1-9 սահմանակետով անցնում է 3743 մ, հասնում լանջի թիվ 10 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11-13 սահմանակետերով անցնելով 1502 մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 15 սահմանակետով անցնում է 170 մ, հասնում Շղարշիկ, Եղնիկ և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5415 մ է:

#### **ՇՂԱՐՇԻԿ – ԿԱՐՄՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Շղարշիկ, Կարմրաշեն և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը սարալանջով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում է 1156 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բլրագագաթներով, հատելով ձորակներ, անցնում է 2446 մ, հասնում բլրի ստորոտի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 385 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջի թիվ 4-5 սահմանակետերով անցնելով 1299 մ, հասնում է Շղարշիկ, Կարմրաշեն և Եղնիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5258 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵԹԱՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ոսկեթաս գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Իրինդ գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Կաթնաղբյուր և «Գ»-«Դ» հատվածով՝ Կարմրաշեն գյուղական համայնքներին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Ակունք գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Մաստարա գյուղական համայնքին, հյուսիսից և արևելքից «Զ»-«Ա» հատվածով՝ Ջովասար գյուղական համայնքին:

### **ՈՍԿԵԹԱՍ – ԻՐԻՆԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ոսկեթաս, Իրինդ և Ջովասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգույցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, լանջով անցնելուն 223 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 284 մ, հասնում բլրագագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 875 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարալանջով, բնական աղբյուրների մոտով, թիվ 6-8 սահմանակետերով անցնելով 1117 մ, հասնում է Ոսկեթաս, Իրինդ և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգույցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2499 մ:

### **ՈՍԿԵԹԱՍ – ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ոսկեթաս, Կաթնաղբյուր և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 595 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի

հյուսիս-արևմուտք, սարալանջով անցնում 375 մ, հասնում Ոսկեթաս, Կաթնաղբյուր և Իրինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգույցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 970 մ է:

#### **ՈՍԿԵԹԱՍ – ԿԱՐՄՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ձորակի եզրին գտնվող Ոսկեթաս, Կարմրաշեն և Կաթնաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգույցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, շրջանցում սարը, ձորակով անցնում 1324մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակը, լանջով անցնում է 927 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջերով՝ թիվ 3-6 սահմանակետերով անցնում 2075 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 124 մ, հասնում ձորակի եզրի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորակով անցնում 1386 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 9 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորակի թիվ 10-36 սահմանակետերով անցնում 5587 մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, հատում Կարմրաշեն-Ոսկեթաս մարզային ճանապարհը, և թիվ 38 սահմանակետով անցնելով 580 մ, հասնում է դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, քիչ հարավ-արևմուտք, թիվ 40 սահմանակետով անցնում 510 մ, հասնում Ոսկեթաս, Կարմրաշեն և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգույցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12513 մ է:

#### **ՈՍԿԵԹԱՍ – ԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ոսկեթաս, Ակունք և Մաստարա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգույցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով հոսող առվի ոլորապտույտների թիվ 1-24

սահմանակետերով անցնում է 2550 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարթավայրային ռելիեֆով, հատելով դաշտամիջյան ճանապարհներ, անցնում է 613 մ, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 652 մ, հասնում է Ոսկեթաս, Ակունք և Կարմրաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3815 մ է:

### **ՈՍԿԵԹԱՍ – ՄԱՍՏԱՐԱ ԱՎՅԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Ոսկեթաս, Մաստարա և Ջովասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1148 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 273 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 1213 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 311 մ, հասնում ձորի եզրին գտնվող Ոսկեթաս, Մաստարա և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2945 մ է:

### **ՈՍԿԵԹԱՍ – ՋՈՎԱՍԱՐ ԱՎՅԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Ոսկեթաս, Ջովասար և Իրինդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջով անցնում 412 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով անցնում 3336 մ, հասնում ձորակի եզրի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 525 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին,

այստեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ձորակով անցնում 2002 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով, թիվ 5-9 սահմանակետով անցնում 2580 մ, հասնում լանջի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջի թիվ 11 սահմանակետով անցնում 569 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջերի թիվ 13-16 սահմանակետերով անցնելով 1847 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով, թիվ 18-19 սահմանակետերով անցնում 1057 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում Ջովասար-Ոսկեթաս միջհամայնքային ավտոճանապարհը, թիվ 21-22 սահմանակետերով անցնելով 428 մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-26 սահմանակետերով անցնելով 741 մ, հասնում է Ոսկեթաս, Ջովասար և Մաստարա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13498 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՉՔՆԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Չքնաղ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Թթուջուր գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վարդենիս և «Դ»-«Ա» հատվածով՝ Սարալանջ գյուղական համայնքներին:

### **ՉՔՆԱՂ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

### **ՉՔՆԱՂ – ԹԹՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Չքնաղ, Թթուջուր գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրբաժանի և ձորակի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 1-7 սահմանակետով, անցնում 1087 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը անցնում 520 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով անցնում է 567 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով անցնում 373 մ, հասնում 2597 մ, նիշով բարձունքի գագաթի թիվ 11 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հետո կրկին հարավ, թիվ 12-15 սահմանակետերով անցնում 2826 մ, հասնում Ապարան-Թթուջուր միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, հատելով վերը նշված ճանապարհը, անցնում է 79 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ,



անցնում 268 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, վարելահողերի միջնակով անցնում 139 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, վարելահողերի միջնակով անցնում 146 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 61 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 258 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 1436 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 326 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 649 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 156 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 255 մ, հասնում անտառի եզրով անցնող դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 922 մ, հասնում անտառի եզրին գտնվող Չքնաղ, Թթուջուր և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10066 մ է:

### **ՉՔՆԱՂ – ՎԱՐԴԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Չքնաղ, Վարդենիս և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի և ջրբաժանի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձունքների գագաթների թիվ 1-11 սահմանակետերով անցնում 1276 մ, հասնում թիվ 12 սահմանակետին որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 341 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով՝ թիվ 15-16 սահմանակետերով անցնում 2075 մ, հասնում անտառի եզրի թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անտառի եզրով անցնում 942 մ, հասնում անտառի եզրի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառի եզրով թիվ 19 սահմանակետով, անցնում 487 մ, հասնում անտառի եզրի թիվ 20 սահմանակետին,

այնուհետև թեքվում է դեպի հարավ, անտառի եզրի ոլորանների թիվ 21-22 սահմանակետերով անցնում 601 մ, հասնում անտառի եզրի թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով, անցնում 323 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորակով՝ թիվ 27-28 սահմանակետերով անցնում 461 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 627 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 1057 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ արևմուտք, վարելահողերի միջնակով անցնում 190 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Ապարան-Չքնաղ միջհամայնքային ճանապարհը անցնում է 115 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, վարելահողերի միջնակով՝ թիվ 34-36 սահմանակետերով անցնում 621 մ, հասնում թիվ 37 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, վարելահողերի միջնակով՝ թիվ 38-44 սահմանակետերով անցնելով 1714 մ, հասնում է թիվ 45 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով գետակը, անցնում է 222 մ, հասնում թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հետո կրկին հարավ-արևելք, թիվ 47-48 սահմանակետերով անցնում 441 մ, հասնում Ապարանի ջրամբարի եզրին գտնվող Չքնաղ, Վարդենիս և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11493 մ է:

### **ՉՔՆԱՂ – ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՈ՛՝ «Դ»-«Ա»**

Չքնաղ, Սարալանջ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է լանջի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով՝ թիվ 1-13 սահմանակետով, անցնում 1290 մ, հասնում ձորի եզրին գտնվող Չքնաղ, Սարալանջ և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1290 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՏԻՉԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Պարտիզակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արուճ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Նոր-Ամանոս գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արմավիրի մարզին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքին:

### **ՊԱՐՏԻՉԱԿ - ԱՐՈՒՅ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Պարտիզակ, Արուճ և Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, սարահարթային ռելիեֆով, ժամանակավոր գործող առվով և թիվ 1-10 սահմանակետերով անցնում է 1341 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատելով ձորակը անցնում է 261 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 734 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 775 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ուղիղ գծով, թիվ 16 սահմանակետով անցնում 1561 մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, ձորակի թիվ 18-21 սահմանակետերով անցնելով 426 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 424 մ, հասնում Պարտիզակ, Արուճ և Նոր Ամանոս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5529 մ է:

## **ՊԱՐՏԻՉԱԿ – ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Պարտիզակ, Նոր Ամանոս և Արուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 1474 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնելով 826 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորի թիվ 9-14 սահմանակետերով անցնում 1343 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 501 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 17-21 սահմանակետերով անցնելով 2375 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, ձորի ոլորանների թիվ 23-40 սահմանակետերով անցնելով 6792 մ, հասնում է Պարտիզակ, Նոր Ամանոս գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13311 մ է:

## **ՊԱՐՏԻՉԱԿ – ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանների հետ:

## **ՊԱՐՏԻՉԱԿ – ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱՔԵՐՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Պարտիզակ, Ներքին Բազմաբերդ և Արուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Ներքին Բազմաբերդ համայնքի բնակավայրի հարավային եզրագծով անցնում 994 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 78 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 891 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որը գտնվում է ձորի եզրին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 4-24 սահմանակետերով անցնելով 1944 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 25

սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 26 սահմանակետով, դաշտային ճանապարհով անցնում է 591 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ձորով՝ թիվ 28-30 սահմանակետերով անցնում 968 մ, հասնում է թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, քիչ հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 32-38 սահմանակետերով անցնելով 602 մ, հասնում է ձորի եզրի թիվ 39 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորով, թիվ 40-59 սահմանակետերով անցնելով 11832 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Պարտիզակ, Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17899 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՄԲԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Զրամբար գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Եղիպատրուշ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շողակն գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Երնջատափ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Հարթավան, «Ե»-«Զ» հատվածով՝ Շենավան և «Զ»-«Ա» հատվածով՝ Քուչակ գյուղական համայնքներին:

### **ԶՐԱՄԲԱՐ – ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ապարանի ջրամբարի արևելյան եզրին գտնվող Զրամբար, Եղիպատրուշ և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրի միջով, ուղիղ գծով անցնում 1000 մ, հասնում ջրամբարի արևելյան եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հետո հարավ-արևելք, այնուհետև հարավ, ջրամբարի արևելյան եզրագծով, թիվ 1-9 սահմանակետերով անցնելով 1140 մ, հասնում է ջրամբարի արևելյան եզրագծի մոտ գտնվող Զրամբար, Եղիպատրուշ և Շողակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2140 մ է:

### **ԶՐԱՄԲԱՐ – ՇՈՂԱԿՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Զրամբար, Շողակն և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ապարանի ջրամբարի արևելյան եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հետո

հարավ-արևելք, ջրամբարի արևելյան եզրագծի թիվ 1-6 սահմանակետով անցնում 1301 մ, հասնում ջրամբարի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ձորակի թիվ 8-10 սահմանակետերով անցնում 464 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, ճանապարհի թիվ 13-26 սահմանակետերով անցնում 2420 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք և անցնելով 81 մ, հասնում է Ջրամբար, Շողակն և Երնջատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4266 մ է:

### **ՋՐԱՄԲԱՐ – ԵՐՆՋԱՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ջրամբար, Երնջատափ և Շողակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, ճանապարհի թիվ 1-9 սահմանակետերով անցնում 682 մ, հասնում ճանապարհի և առվի հատվան տեղում գտնվող թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև արևմուտք, առվի թիվ 11-14 սահմանակետերով, անցնելով 470 մ, հասնում է Քասաղ գետի ափին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, գետի ոլորանների թիվ 16-25 սահմանակետերով անցնելով 1244 մ, հասնում է Քասաղ գետի և ճանապարհին հատման տեղում գտնվող Ջրամբար, Երնջատափ և Հարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2396 մ է:

### **ՋՐԱՄԲԱՐ – ՀԱՐԹԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ջրամբար, Հարթավան և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 59 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք,

ավտոճանապարհով անցնում 121 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 185 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 131 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, ճամբարի ցանկապատին զուգահեռ, դաշտային ճանապարհի թիվ 7 սահմանակետով անցնում 333 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ցանկապատով անցնում 10 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, վարելահողերի միջնակով անցնում 49 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք ապա արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 191 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 247 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, այստեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, այնուհետև կրկին հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 15-20 սահմանակետերով անցնելով 744 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք, այնուհետև հարավ-արևելք, դաշտային ճանապարհի ոլորաններով, թիվ 22-34 սահմանակետով անցնելով 1305 մ, հասնում դաշտային ճանապարհի և Քասաղ գետի հատման տեղում գտնվող Ջրամբար, Հարթավան և Երնջատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3377 մ է:

### **ՋՐԱՄԲԱՐ – ՇԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Ջրամբար, Շենավան և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրամբարի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրամբարի արևմտյան եզրով, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 516 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այստեղից ջրամբարի միջով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ, ջրամբարի միջով, թիվ 11 սահմանակետով անցնում 2378 մ, հասնում է ջրամբարի մեջ գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ջրամբարի միջով, թիվ 13-14 սահմանակետերով



անցնում 241 մ, հասնում ջրամբարի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրհան կայանի տարածքի եզրագծով անցնում 46 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 128 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 105 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, արտադրական մասի եզրագծով, թիվ 21-22 սահմանակետերով անցնում 157 մ, հասնում է Ջրամբար, Շենավան և Հարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3570 մ է:

#### **ՋՐԱՄԲԱՐ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»-«Ա»**

Ապարանի ջրամբարի արևելյան եզրին գտնվող Ջրամբար, Քուչակ և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ջրամբարի արևմտյան եզրով թիվ 1-2 սահմանակետերով անցնում 573 մ, հասնում ջրամբարի եզրին գտնվող Ջրամբար, Քուչակ և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 573 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՂՈՒՆՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սաղունց գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վարդաբլուր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ծաղկահովիտ գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղաձոր գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Բերքառատ գյուղական համայնքին:

### **ՍԱՂՈՒՆՑ – ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սաղունց, Վարդաբլուր և Բերքառատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին՝ դաշտային ճանապարհների խաչմերուկում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1633 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող Սաղունց, Վարդաբլուր և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1633 մ է:

### **ՍԱՂՈՒՆՑ – ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Սաղունց, Ծաղկահովիտ և Վարդաբլուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 650 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 454 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման տեղում գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է

դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 4-5 սահմանակետերով անցնում 788 մ, հասնում է Ալազյազ-Արթիկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, նշված ավտոճանապարհով անցնում 454 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հատում ավտոճանապարհը, դաշտային ճանապարհով անցնում 117 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 9 սահմանակետով անցնում 1036 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որը գտնվում է Ծաղկահովիտ-Սադունց ավտոճանապարհի և այդ ճանապարհից աջ թեքվող դաշտային ճանապարհի հատման խաչմերուկում: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 689 մ, հասնում բնակավայրի եզրագծի նոտ գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև շարունակվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի եզրագծի թիվ 12 սահմանակետով անցնում 871 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ և ձորակներ, դաշտային ճանապարհով, լանջով, ապա կրկին դաշտային ճանապարհով անցնում է 4787 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Սադունց, Ծաղկահովիտ և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9846 մ է:

### **ՍԱԴՈՒՆՑ – ԳԵՂԱՁՈՐ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սադունց, Բերքառատ և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևելք, ապա կրկին հարավ, դաշտային ճանապարհի թիվ 1-3 սահմանակետերով անցնում 2138 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 4 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ, հատում Ալազյազ-Արթիկ ավտոճանապարհը, և անցնելով 445 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, լանջերով անցնում 5951 մ, հասնում է դաշտային ճանապարհի

եզրին գտնվող Սադունց, Գեղաձոր, և Ծաղկահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8535 մ է:

### **ՍԱԴՈՒՆՑ – ԲԵՐՔԱՌԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Սադունց, Բերքառատ և Վարդաբլուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով անցնում 187 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 783 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող Սադունց, Բերքառատ և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 970 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սաղմոսավան գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից և հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Երնջատափ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Օհանավան գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արտաշավան գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Ափնագյուղ գյուղական համայնքին:

### **ՍԱՂՄՈՍԱՎԱՆ – ԵՐՆՋԱՏԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Սաղմոսավան, Երնջատափ և Ափնագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Քասաղ գետի ափին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 210մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, հետո արևելք, Քասաղ գետի ձորով, այնուհետև ձորակով, կոլեկտիվ այգեգործական ամառանոցների եզրով, անցնում 2267 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 95 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, այնուհետև հյուսիս-արևմուտք, լանջերով, կոլեկտիվ այգեգործական ամառանոցների և անտառի եզրագծով, հատելով ձորակը, թիվ 3-6 սահմանակետերով, անցնում 1246 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, այգեգործական ամառանոցների և անտառի եզրագծով, թիվ 8 սահմանակետով անցնելով 302 մ, հասնում է Սաղմոսավան, Երնջատափ և Օհանավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4121 մ է:

## ՍԱՀՄՈՍԱՎԱՆ – ՕՅԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Սաղմոսավան, Օհանավան և Երնջատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 540 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 31 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 151 մ, հասնում այգեգործական (ամառանոցների տարածքով) անցնող ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, վերը նշված ճանապարհի թիվ 4-5 սահմանակետերով անցնելով 715 մ, հասնում է Ժայռի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ձորի ձախ եզրի զառիթափով, թիվ 7-24 սահմանակետերով անցնում է 2217 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 148 մ, հասնում Քասաղ գետի ձորում գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ, անցնում գետի ոլորաններով, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, գետով անցնում 3537 մ, հասնում է Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7339 մ է:

## ՍԱՀՄՈՍԱՎԱՆ – ԱՐՏԱՇԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Սաղմոսավան, Ափնագյուղ և Արտաշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորի թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1450 մ, հասնում ձորի եզրի թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 555 մ, հասնում ձորի եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, և հարավ-արևմուտք ձորի ոլորանների թիվ 7-11 սահմանակետերով անցնելով 3308 մ, հասնում Սաղմոսավան, Արտաշավան և Օհանավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5313 մ է:

## ՍԱՂՆՈՍԱՎԱՆ – ԱՓՆԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Սաղնոսավան, Ափնագյուղ և Երնջատափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Քասաղ գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ, անցնում Քասաղ գետով՝ այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, միանում Քասաղ գետի վտակին, այդ վտակով, ձորակով, թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք, և անցնելով 5709 մ, հասնում է Սաղնոսավան, Ափնագյուղ և Արտաշավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5709 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սասունիկ գյուղակյան համայնքը գտվում է մարզի հարավային մասում :

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աշտարակ քաղաքային համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով` Կոտայքի մարզին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով` Երևան քաղաքին, հարավից և հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով` Արմավիրի մարզին, հյուսիս-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով` Օշական համայնքին:

### **ՍԱՍՈՒՆԻԿ - ԱՇՏԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ա»-«Բ»**

Սասունիկ, Օշական և Աշտարակ համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը հատելով ջրբաժանը անցնում է հյուսիս-արևելք, ապա լանջով թեքվում է արևելք թիվ 1-10 սահմանակետերով անցնելով 1351 մ միանում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը հատելով դաշտային ճանապարհներ անցնում է հարավ-արևմուտք թիվ 12-18 սահմանակետերով 572 մ հասնում թիվ 19 սահմանակետին, հետո թեքվում հարավ, հարթավայրային ռելիեֆով անցնելով թիվ 20 սահմանակետով 239 մ հասնում թիվ 21 սահմանակետին, ապա շրջադարձերով անցնում հարավ-արևելք թիվ 22-28 սահմանակետերով 822 մ միանում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը հարթավայրային ռելիեֆով անցնում է արևելք միանում թիվ 31 սահմանակետին, հետո հատելով ձորը թեքվում է հարավ-արևելք , ապա հյուսիս-արևելք անցնելով թիվ 32-33 կետերով 2196 մ միանում թիվ 34 սահմանակետին , որից հետո լանջով թեքվելով հյուսիս-արևելք անցնելով ջրբաժանով, թիվ 35 սահմանակետով անցնելով 1051 մ միանում Սասունիկ, Աշտարակ և Կոտայքի մարզի Պռոշյան համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին :

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6231 մ է:



### **ՍԱՍՈՒՆԻԿ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանի հետ:

### **ՍԱՍՈՒՆԻԿ – ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի մարզի և Երևան քաղաքի սահմանի հետ:

### **ՍԱՍՈՒՆԻԿ - ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի սահմանի հետ:

### **ՍԱՍՈՒՆԻԿ – ՕՇԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Սասունիկ, Օշական և Աշտարակ համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անցնում է հարավ-արևմուտք ջրբաժանով, ապա հատելով Օշական-Երևան մարզային ճանապարհը անցնելով 2652 մ հասնում թիվ 1 սահմանակետին, որից թեքվում արևմուտք անցնում 596 մ հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևմուտք անցնում 710 մ թիվ 3 սահմանակետով, դաշտային ճանապարհով միանում թիվ 4 շրջադարձային սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք դաշտամիջյան ճանապարհով անցնելով 962 մ, հասնում Սասունիկ, Օշական գյուղական համայնքների և Արմավիրի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4920 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սարալանջ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կոտայքի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Չքնաղ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վարդենիս գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Կայք գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Լուսազյուղ գյուղական համայնքին:

**ՍԱՐԱԼԱՆՋ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

**ՍԱՐԱԼԱՆՋ – ՉՔՆԱՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Սարալանջ, Չքնաղ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է լանջի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով՝ թիվ 1-13 սահմանակետով, անցնում 1290 մ, հասնում ձորի եզրին գտնվող Սարալանջ, Չքնաղ և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1290 մ է:

## **ՍԱՐԱԼԱՆՋ – ՎԱՐՂԵՆԻՍ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Սարալանջ, Վարդենիս և Չքնաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի և ջրբաժանի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով՝ թիվ 1-15 սահմանակետերով անցնում 1623 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այստեղից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով փոքրիկ ձորակներ, թիվ 17 սահմանակետով անցնում է 1459 մ, հասնում Սարալանջ, Վարդենիս և Կայք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3083 մ է:

## **ՍԱՐԱԼԱՆՋ – ԿԱՅՔ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Սարալանջ, Կայք և Լուսագյուղ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, նշված ճանապարհով անցնում 1583 մ, հասնում անտառի եզրի թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անցնում 145 մ, հասնում անտառի եզրի թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառի եզրով անցնում 480 մ, հասնում անտառի եզրի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում 393 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, քիչ հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում 535 մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 313 մ, հասնում անտառեզրի բարձունքի գագաթի թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառեզրի բարձունքներով՝ թիվ 7 սահմանակետով անցնելով 1267 մ, հասնում 2433.1 մ նիշ ունեցող սարի գագաթին գտնվող Սարալանջ, Կայք և Վարդենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4718 մ է:

## ՍԱՐԱԼԱՆՁ – ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՍԱՐՍԱԼԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Սարալանջ, Լուսագյուղ գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի 2792 մ նիշ ունեցող գագաթի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 467 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 787 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 722 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ձորակները, թիվ 4-5 սահմանակետերով անցնում է 1575 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 517 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 361 մ, հասնում ձորակում գտնվող թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ձորակի ոլորաններով՝ թիվ 9 սահմանակետով անցնելով 1101 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 633 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով հոսող առվակով՝ թիվ 13 սահմանակետով անցնում 868 մ, հասնում ձորակում գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 219 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղ թեքվում է դեպի հարավ, անցնում թիվ 143 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով անցնում 384 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, դաշտային ճանապարհով, ապա վարելահողերի միջնակով անցնելով 2508 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող Սարալանջ, Լուսագյուղ և Կայք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10285 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վարդենիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Չքնաղ, «Բ»-«Գ» հատվածով՝ Թթուջուր գյուղական համայնքներին, «Գ»-«Դ» հատվածով՝ Եղիպատրուշ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Քուչակ գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Զ» հատվածով՝ Նիգավան գյուղական, «Զ»-«Է» հատվածով՝ Ապարան քաղաքային և «Է»-«Ը» հատվածով՝ Կայք գյուղական համայնքներին, հյուսիս-արևելքից՝ «Ը»-«Ա» հատվածով՝ Սարալանջ գյուղական համայնքին:

### **ՎԱՐԴԵՆԻՍ – ՉՔՆԱՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վարդենիս, Չքնաղ և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի և ջրբաժանի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բարձունքների գագաթների թիվ 1-11 սահմանակետերով անցնում 1276 մ, հասնում թիվ 12 սահմանակետին որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13 սահմանակետով անցնում 341 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով՝ թիվ 15-16 սահմանակետերով անցնում 2075 մ, հասնում անտառի եզրի թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս, անտառի եզրով անցնում 942 մ, հասնում անտառի եզրի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անտառի եզրով թիվ 19 սահմանակետով, անցնում 487 մ, հասնում անտառի եզրի թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անտառի եզրի ոլորանների թիվ 21-22 սահմանակետերով անցնում 601 մ, հասնում անտառի եզրի թիվ 23 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով, անցնում 323 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ձորակով` թիվ 27-28 սահմանակետերով անցնում 461 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 627 մ, հասնում է ձորակի եզրի թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 1057 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ արևմուտք, վարելահողերի միջնակով անցնում 190 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ- արևելք, հատելով Ապարան-Չքնաղ միջհամայնքային ճանապարհը անցնում է 115 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, վարելահողերի միջնակով` թիվ 34-36 սահմանակետերով անցնում 621 մ, հասնում թիվ 37 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, վարելահողերի միջնակով` թիվ 38-44 սահմանակետերով անցնելով 1714 մ, հասնում է թիվ 45 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով գետակը, անցնում է 222 մ, հասնում թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հետո կրկին հարավ-արևելք, թիվ 47-48 սահմանակետերով անցնում 441 մ, հասնում Ապարանի ջրամբարի եզրին գտնվող Վարդենիս, Չքնաղ և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11493 մ է:

#### **ՎԱՐԴԵՆԻՍ – ԹԹՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Բ»-«Գ»**

Վարդենիս, Թթուջուր և Չքնաղ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ապարանի ջրամբարի եզրին, սահմանագիծը ջրամբարի կողքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 330 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրամբարի եզրագծի թիվ 3-5 սահմանակետերով անցնում 1177 մ, հասնում ջրամբարի եզրին գտնվող Վարդենիս, Թթուջուր և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1508 մ է:

## ՎԱՐՂԵՆԻՍ – ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Վարդենիս, Եղիպատրուշ և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրամբարի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրամբարի միջով՝ ուղիղ գծով, անցնում 513 մ, հասնում ջրամբարի մեջ գտնվող Վարդենիս Եղիպատրուշ, և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 513 մ է:

## ՎԱՐՂԵՆԻՍ – ՔՈՒՉԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Սարի գագաթին գտնվող Վարդենիս, Քուչակ և Նիգավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, ձորակով, հետո կրկին ջրբաժանով, անցնելով 5300 մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակով անցնում 1848 մ, հասնում թիվ 2 սահմանակետին այնուհետև շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 421 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 260 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 5-6 սահմանակետերով անցնելով 956 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 329 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 622 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Երևան-Վանաձոր պետական նշանակության ճանապարհը, անցնում է 588 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում է 133 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 12 սահմանակետին, հատում է առուն, շարունակվում դեպի հյուսիս-արևելք, վարելահողերի միջնակով անցնում 979 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, վարելահողի եզրով՝ ուղիղ գծով, անցնում 797 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում է 193 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղից դարձյալ

թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 422 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որը գտնվում է գետակի եզրին, այնուհետև գետակով, ապա դաշտային ճանապարհով, հատելով Քուչակ-Ապարան միջհամայնքային նշանակության ճանապարհը, անցնում է 1910 մ, հասնում ջրամբարի եզրի թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրամբարի հյուսիս-արևմտյան եզրագծով՝ թիվ 18-21 սահմանակետերով անցնելով 593 մ, հասնում ջրի եզրի թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ջրամբարի եզրագծով՝ թիվ 23-25 սահմանակետերով անցնելով 656 մ, հասնում է ջրի եզրի թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրամբարի միջով, ուղիղ գծով, անցնում 710 մ, հասնում ջրամբարի մեջ գտնվող Վարդենիս, Քուչակ և Եղիպատրուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16717 մ է:

#### **ՎԱՐԴԵՆԻՍ – ՆԻԳԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Վարդենիս, Նիգավան գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 71 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 554 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձունքների գագաթներով՝ հատելով ջրբաժանը, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 3780 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող Վարդենիս, Նիգավան և Քուչակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4405 մ է:

#### **ՎԱՐԴԵՆԻՍ – ԱՊԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Վարդենիս, Կայք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է առվի եզրին, սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք,



անցնում 2250 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 252 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում 473 մ, հասնում թիվ 3 սահմանակետին ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 681 մ, հասնում թիվ 4 սահմանակետին այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 4-7 սահմանակետերով անցնում 467 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, հատելով ձորը անցնում է 737 մ, հասնում Վարդենիս, Նիգավան գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4860 մ է:

### **ՎԱՐԴԵՆԻՍ – ԿԱՅՔ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»**

Վարդենիս, Կայք և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով անցնում 471 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 81 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևմուտք այնուհետև արևմուտք և հյուսիս-արևմուտք, անտառի եզրի ձորակով անցնում 2068 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Վարդենիս-Կայք միջհամայնքային ճանապարհը, հարթավայրային տեղանքով թիվ 4-9 սահմանակետերով, անցնելով 2018 մ, հասնում է թմբի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 229 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 431 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 192 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 351 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 472 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղ հատում է դաշտային ճանապարհը, շարունակվում դեպի հարավ-արևմուտք, հատում Երևան-Սպիտակ ճանապարհը, թիվ 16-19 սահմանակետերով անցնելով 1674 մ, հասնում է ձորակի եզրին

գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 158 մ, հասնում ձորակի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող Վարդենիս, Կայք գյուղական և Ապարան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8147 մ է:

#### **ՎԱՐԴԵՆԻՍ – ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»**

Վարդենիս, Սարալանջ և Չքնաղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի և ջրբաժանի հատման տեղում, սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ձորով՝ թիվ 1-15 սահմանակետերով անցնում 1623 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այստեղից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով փոքրիկ ձորակներ, թիվ 17 սահմանակետով անցնում է 1459 մ, հասնում Վարդենիս, Սարալանջ և Կայք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3083 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վարդենուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղաձոր գյուղական համայնքին, հյուսիսից «Բ»-«Գ» հատվածով՝ Արագած և «Գ»-«Դ» հատվածով՝ Շենավան գյուղական համայնքներին, արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Հարթավան և «Ե»-«Զ» հատվածով՝ Ափնագյուղ գյուղական համայնքներին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Արայի գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Ուշի գյուղական համայնքին:

### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ԳԵՂԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վարդենուտ, Գեղաձոր և Ուշի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ուղիղ գծով անցնում 564 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորի թիվ 2-6 սահմանակետերով անցնելով 339 մ, հասնում է ձորի եզրին գտնվող Վարդենուտ, Գեղաձոր և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 903 մ է:

### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ԱՐԱԳԱԾ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ձորի եզրին գտնվող Վարդենուտ, Արագած և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով անցնում 5245 մ, հասնում Վարդենուտ, Արագած և

Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետի:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5245 մ է:

#### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ՇԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Վարդենուտ, Շենավան, և Արագած գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ուղիղ գծով՝ բարձունքներով անցնում 2563 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այստեղից ձորով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, այնուհետև հյուսիս-արևելք, ձորի թիվ 2-14 սահմանակետերով անցնում է 5380 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, առվով անցնում 1394 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով առու, լանջերով և գագաթներով, թիվ 17-19 սահմանակետերով անցնում է 1137 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, ճանապարհով անցնում 3716 մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 132 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով անցնում 1536 մ, հասնում Վարդենուտ, Շենավան և Հարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15856 մ է:

#### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ՀԱՐԹԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Վարդենուտ, Հարթավան և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատելով Երևան-Վանաձոր ավտոմայրուղին, անցնում է 778 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Երևան-Վանաձոր հին ճանապարհով անցնում 622 մ, հասնում ճանապարհի

եզրին գտնվող Վարդենուտ, Ափնագյուղ և Հարթավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1400 մ է:

#### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ԱՓՆԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Վարդենուտ, Ափնագյուղ և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Երևան-Սպիտակ հին մայրուղու եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, նշված ճանապարհով անցնում 827 մ, հասնում է ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով՝ թիվ 2 սահմանակետով անցնելով 319 մ, հասնում է առվի եզրին գտնվող Վարդենուտ, Ափնագյուղ և Արայի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1156 մ է:

#### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ԱՐԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Վարդենուտ, Արայի և Ուշի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է սարի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 367 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնելով 356 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով և բարձունքների գագաթներով անցնելով 3990 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ջրբաժաններ և դաշտային ճանապարհներ, ձորակով՝ թիվ 4-7 սահմանակետերով անցնում է 3111 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 461 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, այստեղից ձորով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհներ և բարձունքներ անցնում է 6611 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 11-12 սահմանակետերով, անցնում 1809 մ, հասնում դաշտամիջյան ճանապարհի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին,

որտեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 380 մ, հասնում է ճանապարհի և ձորակի հատման կետում գտնվող թիվ 14 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակով անցնում 467 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 249 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 17-19 սահմանակետերով անցնում 1360 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով անցնում 664 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 138 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 444 մ, հասնում է Արայի-Վարդենուտ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, դաշտային ճանապարհով, այնուհետև դարձյալ առվով անցնելով 1891 մ, հասնում է Վարդենուտ, Արայի և Ափնագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22297 մ է:

#### **ՎԱՐԴԵՆՈՒՏ – ՈՒՇԻ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»**

Վարդենուտ, Ուշի և Գեղաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի գազաթերով, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1753 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող Վարդենուտ, Ուշի և Արայի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1753 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերին Բազմաբերդ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա» - «Բ» հատվածով սահմանակից է Լեռնարոտ գյուղական համայնքին, արևելքից «Բ» - «Գ» հատվածով՝ Մեծաձոր և «Գ» - «Դ» հատվածով՝ Կաքավաձոր գյուղական համայնքներին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքին, արևմուտքից՝ «Ե » - «Ա» հատվածով՝ Ներքին Սասնաշեն գյուղական համայնքին:

### **ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ – ԼԵՌՆԱՐՈՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Վերին Բազմաբերդ, Լեռնարոտ և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 1090 մ, հասնում բարձունքի գագաթին գտնող թիվ 1 սահմանակետին, որտեղից շարունակվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 2 սահմանակետով անցնելով 2002 մ, հասնում է բարձունքի գագաթին գտնող Վերին Բազմաբերդ, Լեռնարոտ և Մեծաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3092 մ է:

### **ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ – ՄԵԾԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»- «Գ»**

Վերին Բազմաբերդ, Մեծաձոր և Լեռնարոտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծն թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 532 մ, հասնում բլրագագաթին գտնող թիվ 1 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով՝ թիվ 2-3 սահմանակետերով անցնում 1251 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարավանջով, ապա ձորով, հատելով դաշտային

ճանապարհներ և ձորակներ, անցնում է 6737 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակը, անցնում 390 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 1369 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ քիչ հարավ-արևելք, անցնում 568 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Վ.Բազմաբերդ-Մեծածոր միջհամայնքային ճանապարհը, թիվ 10-14 սահմանակետերով անցնում է 781 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 640 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևելք, ձորակի թիվ 18-22 սահմանակետերով անցնում 978 մ, հասնում ձորակի եզրին գտնող Վերին Բազմաբերդ, Մեծածոր և Կաքավածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13247 մ է:

#### **ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ – ԿԱՔԱՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ» -«Դ»**

Վերին Բազմաբերդ, Կաքավածոր և Մեծածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծն թեքվում է դեպի հարավ, ձորակով՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնում 686 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից թեքվելով դեպի հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք, սարահարթային տեղանքով, հատելով դաշտային ճանապարհներ, թիվ 5-9 սահմանակետերով անցնում է 2777 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 324 մ, հասնում Կաքավածոր-Ներքին Բազմաբերդ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնող թիվ 11 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 231 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 181 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հետո հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 465 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 181 մ, հասնում



Վերին Բազմաբերդ, Կաքավաձոր և Ներքին Բազմաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» -«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4843 մ է:

#### **ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ – ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Վերին Բազմաբերդ, Ներքին Բազմաբերդ և Ներքին Սասնաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևեք, հատելով բլուրներ, ձորով և դաշտային ճանապարհով, անցնում է 842 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատելով դաշտային և միջհամայնքային ճանապարհներ, ձորով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 2766 մ, հասնում Վերին Բազմաբերդ, Ներքին Բազմաբերդ և Կաքավաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ »-« Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3608 մ է:

#### **ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ – ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»**

